Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

972

ՄԻՐՏ ՄԱՐԴՈՅ

որ է.

ՏԱՃԱՐ ԱՍՏՈՒԾՈՅ

կամ

ԳՈՐԾԱՐԱՆ ՄԱՏԱՆԱՅԻ

Տասն պատկերներով առաջի դրած.

Որ ամէն մարդ հեշտ խմանայ և միտք առնելով քրիստոնէական կեանքին հետևելոյ համար ջանք անէ.

Թարգմանուածն.

Ի հայրապետութեան Տ. ՅՈՎՀԱՆՆԵՍԻ Կաթողիկոսի սրբազնասուրբ Կաթուղիկոսի ամենայն Հայոց.

Հրամանաւ Տ. ԲԱՂՏԱՍԱՐԱՅ Իշխանաղնի Ջալալեան սրբազան Արքեպիսկոպոսի և մետրապոլտի Հայոց համայն աշխարհի.

ԻՄՈՒՐԻ.
Յամի տեառն 1833.

ՍՍՌ ԳԱ
196

2685
Սիրդ Տարդալ
սամիր սանոյնց
Գարեգին սանոյնց.

Ֆ/979

Սէրբէլ Կրէտոյշ

Այս գիրքս հին գիրք է. և էլ շատ ժամանակից առաջ ընտանալով քարոզութիւն տալվեցաւ հայերէն և թուրքերէն լեզուով. բայց հիմիկ թարգմանվեցաւ ռուսական լեզուից հայոց աշխարհաբառ լեզուին՝ որ շատ մարդիք կարենան կարդալ և օգուտ ստանալ սորանով։

Շատ մարդիք կան որ անհոգութենով են վարվում և խակի հոգս չեն առնում՝ թէ ո՞ւմ են հնազանդվում. Քրիստոսին թէ սատանային։ Սրա համար էս գիրքս ցոյց է տալիս՝ թէ ամէն մեղք և ամէն կորուստ սատանայիցն է դուրս գալիս, և թէ ամէն կեանք և ամէն երանութիւն Քրիստոսիցն է առաջ գալիս, եթէ հաւատքով ընդունենք նորան, որ մեր սրտի մէջն բնակվի։ Ինչ էս է մեր սուրբ գրքերի վարդապետութիւնն՝ որ նորան Աստուած յայտնեց մեր հոգոյ փրկութեան ճանապարհը մեզ ցոյց տալոյ համար։ Այ կ ականջ դնենք Քրիստոսին և նորա առաքեալներին՝ որ հաստատ իմանանք, թէ նորանք ի՞նչ են սովորցնում մեր սրտի համար։

Քրիստոս և նորա առաքեալներն յայտնի և հաստատ սովորցնումեն էսպէս.

Թէ Աստուած իրան թագաւորութիւնը ունի հաւատացեալ և բարեպաշտ Քրիստոնեաների մէջն. ինչու որ նորանց սրտի մէջն բնակվում է իբր իրան տաճարի մէջն, և կառավարում, կերդանայնում սրբում է և Աստուածային զօրութենով, երկնաւոր խաղաղութենով և յաւիտենական կեանքով լցնում է նորանց սիրտը իրան սուրբ հոգոյ ձեռքին։ Ինչ էսպէս սատանան էլ իրան թագաւորութիւնը ունի չար, անհաւատ և ամբարիշտ մարդկանց սրտումն. ինչու որ՝ իրան զօրութենովն չար է գործում նորանց միջումն և նորանց [illegible] լի է շինում։

Քրիստոս սովորցրուց՝ թէ էն թշնամին՝ որ մարդկանց քուն լինելոյ ժամանակն որոմը (ողիոն խոպէը) ցանեց ցորենի մէջն՝ սատանան է։ (Մատթ. ԺԳ. 25. 39)։ Սրանով ցոյց է տալիս՝ թէ մեղքն և ամէն չարութիւնն էն խաբէբայ թշնամուն է դուրս գալիս

Քրիստոս սովորցրուց չար և անհաւատ մարդկանց ասաց. թէ սատանան է ձեր հայրը. և դուք կամենումէք ձեր հօր ցանկութիւններըն անել. նա սկզբից մարդասպան է. նա էլ սուտ է. երբ որ սուտ խօսի, հէնց իրան բաներից է խօսում. ինչու որ նա սուտ է և ստութեան հայրը։ (Յօհ. Ը. 44։ Մատթ. ԺԶ. 25. 28. 29։ ԺԳ. 19։)

Սուրբ պօղոսն սովորցնումէ. թէ սատանան շատ զօրաւոր իշխան է, որ իշխանութիւն և պետութիւն է անում և էս խաւար աշխարհքիս տիրապետումէ. և թէ չար դևերը կան երկնքի ներքևն՝ որ նորանց դէմ պէտք է պատերազմ և կռիւ անենք։ (Եփես. Զ. 12։)

Պօղոսն սովորցնումէ. թէ սատանան էս աշխարհքիս՝ այսինքն չար և անհաւատ մարդկանց աստուածն է, որ նորանց սրտերըն կուրացնումէ, որ Քրիստոսի փառաւոր աւետարանի լուսաւորութիւնն չը ծագէ նորանց վերայ։ (Բ. Կորնթ. Դ. 4։) Այսպա ուրեմն սատանայական գործ և սատանայական կուրութիւն է՝ եթէ Քրիստոսի աւետարանի համար անհոգ լինինք և չըհաւատանք նորան։

Պօղոսն սովորցնումէ՝ թէ սատանան մտել է և գործումէ ապստամբութեան որդիքների մէջն. և չարերն որ գնումեն էս աշխարհքիս սովորութեան պէս և էն իշխանին պէս, որ էս օդիս (հաւայէ) մէջն իշխանութիւն է անում, մեռած են մեղքերումն և յանցանքներումն։ (Եփես. Բ. 2։)

Սուրբ պետրոսն սովորցնումէ. թէ սատանան բարեպաշտների և հաւատացեալների ոսոխ թշնամին է, որ հակառակումէ նորանց հետ, փորձումէ նորանց. և իսկի հանգիստ չի առնում, բայց միշտ գոռոզ առիւծի պէս մեզ է գալիս և պտտումէ՝ թէ որին կուլտայ։ Սրահամը պէտքէ՝ որ արթուն լինինք և հսկում անենք՝ և հաւատքով հաստատված՝ հակառակ կենանք նորան։ (Ա. Պետ. Ե. 8. 9։)

Սուրբ յՕհաննէսն սովորցնումէ. թէ սատանան է էն մոլորացնողն՝ որ բոլոր բովանդակ աշխարհքը մոլորացնումէ. (Յայտն. ԺԲ. 9.)։ Մեղքն նորանից դուրս եկաւ. ինչու որ՝ նա սկզբից մեղանչումէ. և մեղքն և մեղքի ձեռագործն էլ մահն մտցրուց էս աշխարհքիս մէջ։ (Ա. Յովհ. Գ. 8։

Յօհաննէսն սովորցնումէ՝ թէ նա որ մեղք է անում, սատանայիցն է. բայց աստուծոյ որդի Քրիստոսն հենց նրա համար յայտնվեց։, որ սատանայի գործքերըն քանդէ։ (Ա. Յովհ. Գ. 8։)

Սուրբ յակոբոսն գրումէ՝ թէ հակառակ կացէք սատանային և կըփախչի ձեզանից։ (Յակ. Դ. 7։)

Յիսուս իրան աշակերտներին զօրութիւն և իշխանութիւն տուաւ ամէն դևերին վերայ՝ որ նորանց հանեն։ (Մատթ. Ժ. 8։ Ղուկ. Թ. 1։)

Պօղոսն ցոյց է տալիս մեզ (Եփես. Գ. 13) աստուծոյ զէնքերըն՝ որ կարող լինինք սատանային հակառակ կենալ նորա դէմ տեղումն հաստատ կանգնել և նորա մուխ տըվված նետերըն, որ մեզ վերայ ձգումէ՝ անցնել։

Այս ամէն ով որ Քրիստոսի և Աստուածոյ վարդապետութեանն հաւատումէ՝ նա առանց տարակուսանքի իմանումէ, թէ մարդոյ սիրտն կամ աստուծոյն և նորա սուրբ հոգոյն տաճարն է և կամ սատանայի գործելոյ տեղ. թէ ինչպէս որ աստուած և Քրիստոս և սուրբ հոգին հաւատացեալների մէջն բնակվումէ և գործումէ, հենց էնպէս էլ սատանան չար մարդկանց մէջն իշխանութիւն է անում։

Այս աստուածային և Քրիստոսի աւետարանի վերայ հաստատված ուսմունքներս, որ նորանց բոլոր սուրբ Քրիստոնէական եկեղեցին հաւատումէ և սովորցնումէ՝ էստեղ պատկերներով յայտնվումեն կարդացողներին. որ չարերն մեղքից սատանայի իշխանութենից վախենան և յետ քաշվին. և բարեպաշտներն հաւատքի և բարեպաշտութեան մէջն հաստատվին։ Ամէն։ Մի՞թէ թէ միշտ պէտք է միտքդ բերես՝ թէ էս կերներս ոչ թէ մարմնաւոր, բայց հոգևոր բաներն են ցոյց լիս, և սրա համար չը՛կարծես թէ սատանան և մեղքն կամ Քրիստոսն և նորա շնորհքներն հենց էնպէսի ձև և կերպա-

բանք ունենան ինչպէս որ պատկերների մէջն երևումն. բայց սատանայի չար կերպարանքին տեսնելով պէտք է վերանաս սուրբ հոգով, որ նորա հոգևոր չարութիւնն իմանաս և ատես. և Քրիստոսի պատկերին տեսնելով էլ պէտք է վերանաս հոգով՝ որ նորա հոգևոր գեղեցկութիւնն, այսինքն նորա սէրը, ողորմութիւնն, փրկութիւնը, զօրութիւնն և փառքն ճանաչես և նորան ընդունիս քո սրտի մէջ։

Ամէն մէկ պատկերի մէջն մին սիրտ և մին երես է երևում։ պատճառն որ՝ սրտի որպէսութիւնն որ սրբութեան կամ մեղաց տուն է, բոլոր մարդն պէտք է կշռվի և դատվի. և երեսն իբր յայտնի նշան է որ դրսևանց ցոյց է տալիս՝ թէ մարդոյ ներսի որպէսութիւնն ինչպէս է։

Սրա համար ով սիրելի կարդացող՝ ամէն մէկ պատկերին մտիկ արա և ապա քո սրտի մէջ նայիր և քո հոգոյ որպէսութիւնն քննիր՝ որ հաստատ իմանաս, թէ քո վիճակդ ինչ է. եթէ Քրիստոսն կամ սատանան իշխանութիւն ունի քեզանում, եթէ աստուծոյ կամ սատանայի թագաւորութիւնն քեզանում լինի, եթէ մեղքի և սատանայի ծառայ կամ թէ աստուծոյ ազատ որդի լինիս։ Արտիմտոք քննութիւն արա և իսկի անհոգ չի անց կենաս առանց միտք անելոյ, և էլ կեղծաւոր չըլինիս, բայց պարզ մտքով Քրիստոսի և աստուծոյ առաջին խոստովանիր էն, որ քեզանում տեսնումես և գտնումես։ Ահա աստուծոյ առաջին կանգնած ես որ նա սրտի ծածուկ խորհուրդներին քննումէ և ամէն բան տեսնումէ և գիտումէ. որ նորանցից իսկի մին բան ծածկված չէ որ քեզանում կայ։ Ապա եթէ չարութիւն և մեղք գտնես քեզանում, [illegible]ցց և ապաշխարիր նորանից. մի յուսահատվիր, բայց պարզ [illegible] խոստովանիր նորան և դարձիր Քրիստոսի մօտն։ [illegible]տճառն որ՝ նա էլ քո փրկիչ է, և քեզ համար աշխարհք [illegible], և քեզ համար էլ կարգված կանգնած է, որ սատանայի [illegible]գործերին քանդէ, խաւարի իշխանութենից քեզ փրկէ և [illegible] արքայութեան մէջ տանի։ Ա՛յս կարող է քեզ զօրութիւն և կարողութիւն տալ, որ սրանից ետև սատանային չընդվիս և մեղքին չրծաւայես։ Ա՛յս կարող է ազատել [illegible] և եթէ նա ազատէ քեզ, ճշմարիտ ազատ կըլինիս։ (Յոհ. 36։)

Այլ ամէն կարողութենով կուիւ արա մարմնոյն և արիւնին դէմ, աշխարհքի և մեղաց դէմ, մահի սատանայի և դիւ-ժոխքի դէմ. և շատ անգամ միտքդ առ էն շատ ուրախացնող և շատ ահ տուող խօսքերըն՝ որ առաքեալն ասումէ. (Ք. Թես. Ա. 4—10։)

Համբերութիւն և հաւատք ցոյց տուէք ձեր ամէն հալածանքներումն և նեղութիւններումն. որ էս՝ աստուծոյ արդար դատաստանի նշան է, որ դուք արժանի լինիք աստուծոյ արքայութեանն՝ որ նորա համար էլ նեղութիւն էք քաշում. Որ պէտք է աստուծոյ առաջին որ նեղութիւն հատուցանէ նորանց՝ որ նեղացնումեն ձեզ. և ձեզ նեղացածներիդ հանգիստ մեզ հետ, երբ որ Տէր Յիսուսն կը յայտնվի երկնքիցն իրան զօրութեան հրեշտակներումն. կրակի բոցով վրէժ առնելոյ նորանցից, որ աստուծոյն չեն Ճանաչում, և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի աւետարանին չեն հնազանդվում. որ նորանք պատիժ կը քաշեն, յաւիտենական կորուստըն Տէրի երեսիցն և նորա փառաւոր զօրութենիցն. երբ որ կը գայ՝ որ փառաւոր լինի իրան սրբերումն և զարմանալի ամէն հաւատացեալներումն. որ մեր փրկութիւնն հաւատարիմ կը լինի էն օրումն։

Ամեն ով որ մեղք է գործում. դա անօրէնութիւն էլ է անում. և հէնց
քնէն մեղքն անօրէնութիւն է։ Բայց գիտութիւնք՝ ըէ դա դրահմամը
յայտնվեցաւ՝ որ մեղքերը վերը առնէ. և դորանում
մեղք չըկայ։ Ամեն ով որ դորանում հաստատվաց է՝ չի մեղանչում. և ամեն ով որ մեղանչում, ոչ տեսաւ դորան՝ և ոչ ճանաչեց դորան։

Մանչուկնք՝ չը՛լինի ըէ-մեն չեշտ խաբէ. դա որ արդարութիւն է անում՝ արդար է, ինչպէս որ դա էլ արդար է։ Բայց դա որ մեղք է անում՝ սատանայէն է. ինչու որ սատանան հէնց սկզբից մեղանչում. դրահմամը յայտնվեցաւ սատանայի գործերը։ Ամեն ով որ սատանայէն է ծնվաց՝ մեղք չի անում. ինչու որ դորա սերմն մնում դորանում. և կարող չէ մեղանչել պատճառաւ որ՝ սատանայէն է ծնվաց։ Սրանով երևցաւ (ըմբռնվաց) յայտնի էն սատանայի որդիքն և սատանայի որդիքն. ամեն ով որ արդարութիւն չի անում՝ դա սատանայէն չէ, և ոչ էլ դա՝ որ երան եղբօրը չի սիրում։ (iii. Յօհ. գ. 4—10.)



Ա. 1.



Այս պատկերս ինն մեղաց, եղբարք որպէսզի թաքնենք զ Երեսաց
ցնորամ՝ որ մեզ ինն Դատապարտէ և թողցէ տալիս սատան
Նայելոյն, որ թրաւեալ արտի մեջն թշխանուէն անէ:

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ։

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ։

Սա էն մարդոյ նէրսէ որպէսութիւնն է երևացում՝ որ մեղքին ծառայութիւն ի լոյլ է պէտք սատանային, որ էրան որտէ մէջն էշխանութիւն անէ։

Այսպէս էն մարդոյ սիրտն է կերպարաւած և ձևացած, որ իրան անձն մեղքին մնատնեց և էս աշխարհքիս սովորութեան պէս է գնում; էն իշխանին պէս, որ էս օդիս (հաւայէ) մէջն իշխանութիւն է անում; էն չար հոգոյն պէս՝ որ հիմիկ մտել է ապստամբութեան որդիքներին մէջ։ (Էֆես. Բ. 2։) Նորա երեսն էն թեթեւամտութիւնը է ցոյց տալիս. որ ոչ մէնակ մեղքիցն չի վախենում. բայց էլ մեղք գործելն ոչինչ է համարում; և սրա համար համարձակ ամէնն կատարում է, ինչ որ մին անգամ նորա չար սիրտն կամենում է. և հարբածի կամ գժվածի պէս միշտ ուրախութեանով կենում է. և իսկի միտք չի անում աստուծոյ համար՝ կամ յաւիտենական կենաց համար, և կամ էն ահաւոր դատաստանին համար, որ գալու է։

Այսպէսի մարդոյ սրտի մէջն սատանան իշխանութիւն է անում իրան ընկերներին հետ որ նորանք եօթն գլխաւոր մեղքերն են. որ էստեղ եօթն կենդանիքների պատկերներով առաջի դրած կան։ Սատանան սրտի միջումն կանգնած երևում է՝ չէ թե նրա համար՝ որ նա ինքն մարմնաւոր կերպով էնտեղ ընակված համարվի. բայց որ Ճանաչես՝ թե նա հոգևոր կերպով էն սրտի մէջն թագաւորութիւն է անում։ Նորա կերպարանքը էլ տեսնելով չը՛կարծես՝ թե սատա-

նան հենց էնպէսի մարմնաւոր ձև և կերպարանք ունենայ՝ բայց էնպէս պէտք է իմանաս՝ թէ էս կերպարքս մէնակ նրա համար է դրված՝ որ սատանայի չարութիւնը հասկանաս։ Հենց էսպէս էն կենդանիքների պատկերները էլ հոգևոր կերպով պէտք է իմանաս։

Իրամարգն (ՌՈՂՈՒՂԷՆ) որ իրան փառած և փայլուն թէպուրներովն պարծենում է. և ամէն կենդանիքներից գոռոզ է՝ գոռոզութիւնը է ցոյց տալիս. որ նորանով անհամար մարդիք շարժվումեն և մոլորվումեն, որ պարգևների կամ յաջողութիւնների համար կամ իրանց հարստութեան կամ գեղեցկութեան կամ փառաւոր մեծութեան և կամ աստուածանից ստացած ուրիշ բաների համար իրանց անձները մեծացնեն և ուրիշ մարդկանցից աւելի պատուական համարեն։ Ասպա բարձրանումեն նորանք իրանց մտքումն և կարծումեն թէ աստուծոյ էն ձրի (ՏՈՒՔՈ) տրվված պարգևներին և տուրքերին. համար աւելի ազնիւ և մեծ են, քան թէ ուրիշ մարդիքը։ և դրա համար իրաւունք են համարում, որ ուրիշ մարդկանց ցածացնեն, ոչինչ համարեն և նեղացնեն։

Ասյծն է պիղծ և գէշ հոտ ունող կենդանի, և սրա համար գաբշելի ցանկութիւն և ամէն պղծութիւն է ցոյց տալիս։

Խոզն նշանակում է անչափաւորութիւնը. այսինքն ամէն գաբշելի և անառակ շատակերութիւն և հարբեցողութիւն։

Գորտն որ հողով է կերակրվում, ագահութիւնը է ցոյց տալիս որ շարժում է և վառացնում մարդոյն, որ անկուշտ ցանկութեանով էս աշխարհքիս փուչ ապրանքին մանգայ և հենց սրանով սիրտերը իբր թունով (ԱՂՈՒՎ) ապականում։

Ձն որ նորա կերպարանքովն սատանան մեր առաջին ծնողաց խաբեց՝ դրա համար որ նորանց երանութեանն դահանձվեցաւ. նախանձու և չարութեան ձշմարիտ օրինակն և պատկերն է։

Ագռն (ԳԼՈՒԽԷՆ) որ ամէն գազանների աւելի բարկացող և արիւն թափող է, բարկութիւնը և քէն պահելը է նշանակում. որ մարդկանց էնպէսի գործքերի մէջ են տանում, որ մէնակ էս կատաղած գազանները են վայելում։

Գժուար շուն եկող կօրան, ցոյց է տալիս ծուլութիւնը և անհոգութիւնը. որ մարդկանցից վեր է առնում ամէն

աշխատանք և յօժարութիւն ճշմարիտ և բարի բաներըն ըստանալոյ համար, և նորանց յետ է քաշում էն անդադար աղօթքիցն որ երկնքի բանալիքն են։

Սուրբ հոգին դուրս է հանված էն սրտիցն, և հեռանում է. բայց էնպէս էլ նա չի դադարում, որ իրան շնորհքըն և ողորմութիւնըն մեղաւորի առաջն քցէ, և նորա շընորհքն նշանակված է էն կրակի շափաղներումն, որ էն սրտի չորս կողմումն կան։ Բայց նա տեղ չի գտնում որ սրտի մէջ մտնէ. պատճառն որ՝ լիքն է էն մեղքի գարշելութեանումն և խսպառ դրված քցված է սատանայի իշխանութեան տակն։

Հրեշտակն կամ Յիսուսի Քրիստոսի շնորհքն էլ հեռանում է որ աստուծոյ խօսքումն և ուրիշ հնարքով մեղաւորին զարթնացնէ. բայց նա մտիկ չի տալիս նորանց. և իսկի մին բան չի շարժում նորա սիրտըն. ինչու որ խսպառ թմրացած և հարբած է մեղքի ցանկութեանումն և ունայն ուրախութիւններումն։

Ահա էսպէս է էն մեղաւոր մարդոյ ահաւոր և ողորմելի վիճակն, որ էս աշխարհքիս սովորութեան պէս է ապրում և մեղքին է հնազանդվում։

Ո՞հ քանի՞ շատ մարդիք կան, որ էս ողորմելի վիճակիս մէջն կենումեն և խսպառ հանգիստ և անհոգ են. իբր թէ իսկի մին ահ և կասկած չը՛կար իրանց համար։ Որանք քրիստոնեայ են կոչվում. բայց մեղքին և սատանային են ծառայում. նորանք կենդանոյ անուն ունին, բայց մեռած են։ (Յայտն. Գ. 1)։

Աղօթք։

Ամենաողորմ աստուած և փրկիչ, քո անսահման ողորմութեան աչքումն մտիկ արա իմ մեղաւոր սրտի խեղճութեան վերայ։ Լուսաւորիր իմ մտքի աչքերըն քո երկնաւոր լուսոյ շափաղներումն. Լոյս տար իմ խաւարիս մէջն. որ կատարեալ ըլլապէս ճանաչեմ իմ սրտիս որպէսութիւնըն. և շնորհք տուր ինձ, որ խսպառ ազատվիմ և յետ քաշվիմ էն ամենայն, որ էս ցաւալի վիճակիցս կպչումէ ինձ վերայ։ Պահիր ինձ, ով ամենակարող փրկիչ, որ իսկի մին ժամանակ յօժար կամքով մեղանչելով իմ սիրտըս չը՛մատնեմ սատանային և իսկի

օրէնքից դուրս գնալով, թոյլ չըտամ նորան որ ինձ վերայ իշխանութիւն անէ։ Պահացրու ինձ էն խօսքովն, թէ ով որ մեղք է գործում, նա մեղքի ծառայ է. և սատանայից է. և սատանայի որդի է. պատճառն որ՝ որքան որ ես մեղքին են մատնում իմ անձը, էնքան շատ չար և պիղծ դևերն էլ լցնում են իմ սիրտը և պակասում նորան։ Դու ամէն աշխարհքի ստեղծող և Տէր՝ իմ սիրտս քեզ համար արիր. և նորան քեզ համար բնակվելոց տեղ պատրաստեցիր. ապա ես ի՞նչպէս կարող եմ տալ նորան սատանային որ նորա համար գործելոց տեղ լինի։ Ո՛վ ամենակարող աստուած՝ փրկիր ինձ սատանայի իշխանութենից, սրբիր ինձ մեղաց պղծութենից. վեր առ ինձանից իմ մեղքով լցված և անմաքուր սիրտս և ինձանում նոր սիրտ ստեղծիր. և ինձանում քեզ հաճոյ բնակվելոց տեղ շինիր. որ փառք լինի քո ամենասուրբ Յիսուս անուանդ. Ամէն։

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ։

Ս. էն մեղաւորի սիրտն է երանացնում, որ ապաշխարում և սկսում մեղէն խոյս տալ։

Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի շնորհքն որ էստեղ հրեշտակի պատկերով երևում է, մեղաւոր մարդոյ աչքի առաջն է քցում մեղքի վարձքն և հատուցումն. էն է. սուրբն կամ դատաստանն և մահն։ Աստուծոյ էն շնորհքն հաւատայնում մեղաւորին Աստուծոյ խօսքովն, թէ՝ ոչ պոռնիկներն, ոչ կռապաշտներն, ոչ շնացողներն, ոչ իգի տեղ անցնողներն, ոչ արուագէտներն, ոչ գողերն, ոչ ագահներն, ոչ հարբեցողներն, ոչ բամբասողներն, ոչ յափշտակողներն, Աստուծոյ արքայութիւնն չեն ժառանգիլ (Ա. Կորն. զ. 9. 10։) բայց թէ „ողորմութիւն և վիշտք էն ամէն մարդոյ վերայ կըլինի որ չար է գործում։ (Հռովմ. բ. 9։)

Ապա մեղաւորն՝ որ խղճմտանքովն սարսափում, դէպի ինքն յետ է դառնում, և իրան սրտի մէջ նայում։ և նորան ամէն կողմով մութիկ է տալիս, և նորանում մէնակ մեղք և գարշե-

Բ. 2.

Յս պատկերս էն մեղաւորի սիրտն է երևացնում, որ ապաշխարում է և սկսում մեղքից փախչիլ:

ՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

լութիւն է գտնում, և Աստուածային լուսոյ օգնականութեանովն՝ որ հիմիկ կարող է նորա սրտի մէջ մտնել, իմանում էն մեղքի վնասակարութիւնը. նա զղջանում և ատում մեղքը, զզվում նորանից. և ցանկանում որ ազատվի և պրծնի նորանից. բայց դեռ տեսնում իրանում նորա իշխանութիւնը. գիտում իրան տկարութիւնը և մեղք գործելոյ յօժարութիւնը. և սրա համար հոգոց է հանում բոլոր սրտով և ասում՝ ,,ես մին խղճալի մարդ եմ, ո՞վ կապրեցնէ ինձ էս մահի մարմնուցս։ Աստուծոյ շնորհքն Յիսուսի Քրիստոսի ձեռովն։ (Հռոմ. է. 24) Ասպէս պատասխան է տալիս նորան սուրբ հոգին. որ մին էլ մօտացել է ապաշխարող և կոտրված սրտին, որ աստուածային շնորհաց բոյերովն լուսաւորէ և աստուծոյ զօրութեանովն հաստատէ նորան։

Ինչ ապա երբ որ սիրտն սուրբ հոգոյ լուսովն լուսաւորվի և շնորհաց կայծակներն նորանում փռվին՝ էն ժամանակն պէտք է որ սատանան իրան ամէն գարշելի ընկերներովն հեռանայ։ Էն գարշելի կենդանիքներն էլ, որ մեղքի և պղծութեան օրինակներ են, հեռանումեն և փախչումեն։ Պատճառն որ՝ որ տեղ որ լոյսն ծագում էնտեղից խաւարն պէտք է հեռանայ. երբ որ ցերեկն հասնում էն ժամանակն գիշերն քէտք է փախչի։ Շնորհքն լոյս է, բայց մեղքն խաւար է և գիշեր։ Երբ որ սկսումենք մեղքն ատել, էն ժամանակն սատանան պէտք է փախչի. պատճառն որ՝ նա մէնակ մեղքի և խաւարի մէջն է իշխանութիւն անում։ Նա մէնակ մեղքի ձեռովն կարող է մեր սրտի մէջ մտնել. մեղքի սէրն մտնելոյ ճանապարհ է տալիս նորան. հենց էն մեղքի սէրն՝ դուռն է բանում նորա համար որ սրտի մէջ մտնէ և տեղ գտնէ։ Բայց աստուծոյ սէրն, և մեղքի ատելութիւնն արգելում նորան, որ սրտի մէջ չը՛մտնէ և դուրս է քցում նորան։

Ո՛վ մարդիք, սիրեցէ՛ք լոյսն՝ և ատեցէ՛ք խաւարն. հակառակ կացէք չարին դէմ. և սատանան կըփախչի ձեզանից։ Խփեցէ՛ք ձեր աչքերն աշխարհքի համար, մեղքի համար և էն ամէն մոլորութիւններին համար, որ դէպի չարն են տանում. բայց բա՛ց արէք ձեր սրտերդ սուրբ հոգոյ լուսոյն

համար. թող ամէնից աւելի էն լուսոյ ամէն մէկ շափաղն ձեզ ախորժելի և քաղցր լինի. ինչու որ՝ նա հալածումէ մեղքին և խաւարին, սատանային և դժոխքին ձեր սրտից։ Ամէն ջանքով մտիկ արէք ձեր սրտին, որ էլ մեղքի ամէն պղծութիւնը որ նորանում ծածկված կայ գտնէք և հալածէք և նորանից զզվիք։ Աստուծոյ էն լուսոին, որ միշտ ձեր սրտերի աւաջին սպասումէ մտնելոյ համար, որ ձեր բոլոր միտքն լուսաւորումէ և կենդանացնումէ՝ երբ որ սրտի դուռը բաց էք անում նորա համար. Աստուծոյ հենց էն լուսոին ամէն մէկ գարշելի և պիղծ կենդանին կըճանաչէք, այսինքն մեղքի ամէն կեղտոտութիւնը և պղծութիւնը կիմանաք. և աստուծոյ շնորհքն որ տկարների մէջ զօրաւոր է, կըփրկէ ձեզ նորանից։

Աղօթք։

Ո՛վ Աստուած, ամէն լուսոյ և ամէն կեանքի աղբիւր, մենակ դու, մենակ քո հոգոյ լոյսն կարող է իմ մեղքերիս ամէն պղծութիւնը և մեռելութիւնը ցոյց տալ ինձ։ Կենաց լուսոին լուսաւորիր իմ հոգոյ խաւարը՝ որ ես էլ տեսնեմ և կենդանանամ։ Որ չես կամենում մեղաւորի մահը, և ապա իմ մահս էլ չես կամենում. բայց հենցքո կեանքովդ երդում կերիր՝ թէ քո կամքդ էն է՝ որ մեղաւորն յետ դառնայ և ապրի։ Ուրեմն ցոյց տուր ինձ իմ մեղքերս, որ ինձ կուրացնումեն և սպանումեն և սատանայի ծառայութենումն կապած պահումեն։ Տուր ինձ քո շնորհքդ, որ Յիսուսի Քրիստոսի ձեռքին խոստացար ամէն մեղաւորներին. թող նա իմ սրտիս մէջ մտնէ, նորան ճշմարիտ ցաւով և զղջութենովն լցնէ մեղքի համար՝ և ճշմարիտ ցանկութիւն գործէ փրկութեան համար. որ մեղքն, մահն և սատանան ինձանից հեռանան և իմ սիրտս քեզ տան։ Շնորհիր ինձ քո սուրբ հոգին, որ ինձանում աստուծոյ սէրն վերկայնէ, որ ուրանամ քո սուրբ պատուիրանքներովն և յօժար լինիմ դէպի ամէն բարի բաներն և գործքերն։ Օ՜օրացրու ինձ, որ իսկի թոյլ չըտամ մեղքին, որ ինձ վերայ թագաւորութիւն անէ, և ոչ սատանային, որ մին էլ կարենայ կուրացնել, և յաղթել ինձ։ Տուր ինձ իմանալ լուսաւոր և կենդանի խայողութեա-

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄՈՒՏՔԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Յն մեղաւոր մարդոյ Եկիրսի որպիսութիւնն, որ Փնտրեն
և Դորա աւիտարանին Յաւաստուն, և սուրբ
հոգուն Լցմուն ։

նով՝ թէ մեղքի մէջ իսկի օգուտ և ուրախութիւն չ՚կայ. բայց թէ նա՝ որ մեղք է գործում՝ մեղքի ծառայ է, և խաւարի և դժոխքի որդի։

Զոր որ իսկի մին ժամանակ չը՛մոռանամ քո խօսքը՝ որ ասում ինձ. թէ իսկի մին ամբարիշտ չ՚ապրի քո առաջիդ. և թէ իսկի մին անիրաւ քո արքայութիւնն չի մտնիլ. բայց թէ ահաւոր դատաստան և յաւիտենական մահ և դատապարտութիւն պատրաստ կան՝ էն ամէնին համար, որ չար են գործում։ Զոր ամէն մեղքից զղջանամ, նորան խոստովանեմ և բոլոր սրտով խոպաւ նորանից հրաժարվիմ և քեզ մօտ դառնամ. որ ամէն չարութենից սրբված, և խաւարի իշխանութենից ազատված՝ քո ողորմութիւնը, և քո լոյսը և քո հաղորդութիւնը ընդունեմ և քեզ հաճոյ լինիմ։ Ամէն։

ԵՐԿՈՒՈՂ ՊԱՏԿԵՐ։

Լ՚ն մեղաւոր մարդոյ նէրսէ որպէս-ինքն է ցոյց տալիս, որ Վրէպոնին և նորա սէրանին հա-տարում, և ուրբ հոգովն լցվում։

Ամեղաւորն որ իրան մեղքերը ճանաչել է և աստուծոյ էն ողորմութիւնը և երկայնմտութիւնը իմացել է, որ էնքան երկար ժամանակ իրան համբերեց, դէպի զղջութիւն և ապաշխարութիւն ածեց, նա հիմիկ բոլոր սրտով շարժված, կակղացած և կոտրված է և զղջութեան արտասունք է թափում։ Այս շատ սաստիկ ցաւում է, որ էնքան շատ ժամանակ և էնքան շատ զարհուրելի կերպով էնպէսի ամենաողորմ աստուծոյն՝ նեղացրուց՝ անարգեց և ոչինչ համարեց. և նորա տեղակ էնքան երկար ժամանակ սատանային ծառայեց։

Բայց երբ որ նա աստուծոյ ողորմութեանովն իրան անձը ճանաչում է, էն ժամանակն կատարվում նորա վերայ էն որ ասվել է սուրբ գրքի մէջն. թէ Տէրն մօտիկ է նորանց որ սրտով մաշված են. և ապրեցնում է նորանց որ հոգով խոնարհ են։ (Սաղմ. ԼԴ. 19)։ Այս կոտրված սրտերը բժշկում է. և նորանց ամէն խոցերը փաթաթում։ (Սաղմ. ՃԽԴ. 3.)։

Հրեշտակն կամ շնորհքն մնտենում հորա սրտին. և ցոյց է տալիս նորան խաչված Յիսուս Քրիստոսին և նորա աւետարանը. այսինքն Աստուած աւետարանի քարոզութիւնովն իմացում է տալիս հորան էն ուրախացնող և փրկող աւետիքը, թէ՝ Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ, որ փրկէ էնպէսի մեղաւորներին որ իրան նման են. թէ նա մեզ մեղաւորներիս համար մեռաւ՝ և մեզայ թողութիւնը և յաւիտենական կեանքը մեզ համար ստացաւ և պատրաստեց. ուրեմն մաշված, խոնարհված, կոտրված և տրտմած սրտին աստուածանից խօսք է տրվում, թէ նա Քրիստոսին ողորմութիւն թողութիւն, փրկութիւն, կեանք և յաւիտենական երանութիւն կամենում իրան տալ. Ապա եթէ մեղաւորն էս առաջի դրած պարգևներիս հաւատքով և խոնարհ համարձակութենով ընդունի, եթէ խաչված Յիսուս Քրիստոսին, նորա չարչարանքներին, մահին, և վաստակներին իրան համար բռնէ. և եթէ կատարելապէս հաւատայ, որ էս ամէնա հեռց իրան համար էլաւ և աստուծոյ ողորմութենովն ընծայի պէս տրվաւ իրան. ապա նա՝ Քրիստոսի ամէն հաւատացեալներին նման սուրբ հոգի է ստանում, և սուրբ հոգին վկայութիւն է տալիս նորա հոգոյն, թէ հիմիկ նորա ամէն մեղքերն թողված են իրան, և թէ աստուծոյ որդի է։ Պատճառն որ՝ սուրբ հոգին նորա սիրտը լցնում խաղաղութենով, ուրախութենով և արդարութենով, և սրա համար Աստուծոյ արքայութիւնն ճշմարտապէս հաստատված է նորա սրտումն։ Ուղղիդ որ՝ դեռ հիմիկ էլ արտասունք են թափվում, բայց տրտունք մենակ գոհութեան, ուրախութեան և ջերմեռանդ սիրոյ արտասունք են, որ գոհանում նորանից, որ փրկեց նորան ամէն մեղքից և իրան հոգովն լցրուց։ Սարսիին հոգոյ հետ ուրախանում կենդանի աստուծովն։ Աստն սրտի մէջն փայլում. ինչու որ՝ հաւատքն կենդանացած է։ Նորա փրկութեան թշնամիքներն՝ էն զարհուրելի կենդանիքներն, և սատանան իրան ամէն ընկերներովն խսպառ հալածված են և դուրս քցված են նորա սրտի միջից։ Էն ժամանակն կարելի է ասել թէ, „դուք էլ առաջ ամէն մեղքով պրկված մարդիք էիք, բայց լուացվեցաք, բայց սրբվեցաք, բայց արդարացաք մեր Տէր Յիսուսի Քրիստո-

սի անուանումն և մեր աստուծոյ հոգումն. (Ա. Կորն. Ը. 11)։ Օ՜հ քանի փառաւոր, քանի ուրախանալի և քանի երանելի է էն մեղաւորի սիրտն, որ հաւատքով շնորհք և մեղաց թողութիւն ստացաւ. նա էնքան երանելի է որ միշտ կամենում մի-այն օրհնութիւն ասել աստուծոյն։ Ո՛ւրքան էլ ուրախանայ իւրան փրկչի համար և նորա շնորհաց մեծութեան համար. որքան էլ զարմանայ և գոհանայ նորա սիրոյն և ողորմութեան համար. բայց էս ամենը էլ բաւական չի համարում. բայց խիստ ցանկանում՝ որ էլ աւելի ուրախանայ և գոհանայ նորանից։

Բայց էս ամենիս վերայ պէտք է, որ նա էտպէսի ուրախութեան մէջ արթուն լինի և վախենայ, որ անհոգութեան մէջ կընկնի. պատճառն որ՝ էն կեղտոտ կենդանիքներն՝ այսինքն՝ մեղքերն, թէ և սրտի դուրս կողմն են, և սատանան թէև իւրան իշխանութիւնը կորցրուց նորա վերայ. բայց էնպէս էլ լիսպաւ չի հեռացել նորանից. նա և մեղքն մեծ չարութեանով գիշեր և ցերեկ ջանք են անում, որ յետ դառնան էն տեղն, որ նորանից հալածվեցան։ Նա շատ բարկութեանով մտնում է գալիս և մտիկ է տալիս, որ մին էլ մտնէ։ Սրա համար արթուն կացէք և աղօթք արէք։

Ա. ՂՕՐ։

Ո՛վ ամենակարող փրկիչ՝ ի՞նչպէս կարող եմ բաւական ուրախանալ քո ողորմութեանովն և սիրովն. և ի՞նչպէս կարող եմ բաւական շնորհակալ լինել և գոհանալ քեզանից քո փրկութիւն տուող աւետարանիդ համար։ Դու քո արիւնովն փրկութիւն շնորհեցիր ինձ. այսինքն իմ ամէն մեղքերի թողութիւնը, (Եփես. Ա. 7։) Դու տուիր ինձ սուրբ հոգդ գրաւուն և կնքեցիր (Ռօմրէյրը) ինձ մինչև էն փրկութեան օրն։ (Կորն. Ա. 22.)։ Ես հիմիկ՝ ով Տէր՝ էլ աւելի կենդանացրու իմ հաւատքս. էլ աւելի լուսաւորիր իմ մտքիս աչքերը, որ ճանաչեմ էն պարգևները և բարիքները և ամէն երկնաւոր օրհնութիւնները՝ որ դու քո չարչարանքովն և մահովն ինձ համար պատրաստեցիր, և քո աւետարանի մէջ իմ առաջիս ես դնում։ Օ՜հ քանի մեծ է էն ողորմութիւնն, երանութիւնն և հարստութիւնն, որ դու քո շնորհքովն տուիր

լինձ։ Այ՛ս որ առաջ սատանայի գործելոյ տեղն էի, հիմիկ սուրբ հոգոյն տաձար էլայ։ Այ՛ս որ առաջ մեղքի ծառայ էի, հիմիկ Աստուծոյ որդի էլայ։ Այ՛ս՝ որ առաջ պիղծ դևերին բնակարան էի, հիմիկ հրեշտակների ուրախութեան պատճառ էլայ։ Այ՛ս որ առաջ ինձանում մեղքն սաստկութենով տիրապետում էր և սատանան թագաւորութիւն էր անում, հիմիկ միայն ուրախութիւն, խաղաղութիւն, և արդարութիւն եմ վայելում սուրբ հոգոյն, որ նորան Աստուած տուել է ինձ, որ էլ բնակվում է ինձանում։ Իմ փրկութեան թշնամիքներն հալածվեցան և դուրս ելվեցան. էն կապանքներն որ ինձ մեղաց և սատանայի ծառայութեան մէջ պահում էին, խզվեցան և կտրվեցան, և ես ազատ եմ։ Ողորմութիւն տրվվաւ ինձ, և շնորհք գտի։ Այսպա ի՞նչպէս կարող եմ բաւական շնորհակալ լինել քեզանից։ Ո՛հ քո օրհնութիւնն միշտ և ամէն ժամանակ իմ բերանումն լինի։ Ա՛վ սիրելի փրկիչ՝ մէնակ էն եմ խնդրում քեզանից, քո երեսիցդ մի քցեր ինձ, և մի թափեր ինձ իմ փրկիչ աստուած. (Սաղմ. Էզ. 9.)։ Պահիր իմ սիրտը, որ ուրախ լինի քո անուանիցդ վախենալով։ (Սաղմ. ՃԵ. 11.)։ Պահիր ինձ որ իսկի անհոգ չըլինիմ. բայց աղաթուն կենամ. որ իսկի մին էլ չըխաբվիմ իմ փրկութեան թշնամուցն և մեղքիցն։ Ո՛հ քո շնորհքն իմ սիրտը հաստատէ, որ մեղքին ատեմ և նորանից վախենալով փախչի ինչպէս դժոխքի կորուստիցն։ Ո՛հ աղաստեցիր ինձ. ապա թող մի տար որ մին էլ ծառայ լինիմ։ Ո՛հ իմ սիրտը սրբեցիր որ քեզ լինի. ապա թող մի տար որ մին էլ պղծվի ապականվի։ բայց թող տաձար լինի սուրբ հոգոյն. և խաղաղութեանն, ուրախութեան և արդարութեան տուն։ Ամէն։

ԱՌԱՔՅԱԼՈՒ ՊԱՏԿԵՐ.

Այն մարդոյ նէրսէ որպէսութիւնը յայտնի երևացնում, որ Աստուծոյ արքայութիւնովն սոպոծոյ հէպ հաղորդած է, և ուրիշներն հոմար դիտ էն անում, բայց մէնակ խաչվածն Յիսուսի Քրիստոսի հոմար։

Այն մեղաւորի սրտումն, որ ողորմութիւն և մեղաց թողութիւն գտաւ, իսկի մին բան չի երևում, բայց մէնակ խա



Զոր մարդոյ ճշմարիտ սրտիս խնդութեանն, որ Քրիստոս արդարութեամբն ԵՒ ճիշտ հաշտուցան զ Եւ ոչինչ բանք հաւատար մեռոյ չի անուամբ, բայց միայն մի ճանապարհաւորեալ Յոր Քրիստոս հաւատար:

ված Քրիստոսն և նորա չարչարանքի նշանները։ Պատճառն որ՝ սուրբ հոգին, որ մարդն յանձնված է նորան, և որ հիմիկ կառավարում նորան, իսկի ուրիշ բանով կարող չէ նորա սիրտը վառել աստուածային սիրոյ մէջ, բայց մէնակ օրէցօր Յիսուս Քրիստոսին յայտնի կանգնացնելով նորա առաջին իրան չարչարանքների կերպարանքումն, և նորա միտքն բերելով թէ իրան աղատութիւնն որքան աշխատանք և ցաւ գործեց իրան փրկիչ Յիսուսին։ Սրամամբ հաւատացեալ մեղաւորի գլխաւոր պարապմունքն, հեռանողութիւնն և գործն հետց էն է, որ միշտ Յիսուսի Քրիստոսի չարչարանքը և մահը մոռածէ և իրան հոգոյ առաջին յայտնի կանգնացնէ։ Լսպէսի մարդն. պօղոս առաքելոյ հետ ասում. միտքս չէի դրած մին ուրիշ բան գիտել բայց միայն Յիսուս Քրիստոսին՝ և նորան խաչված։ Ինձ քաւ լիցի մին բանով պարծենալ. բայց միայն մեր Տէր Յիսուսի Քրիստոսի խաչովն. որ նորանով աշխարհքն ինձ համար խաչված է, և ես էլ աշխարհքին համար։ (ա. Կորն. Բ. 2։ Գաղ. Զ. 14։)

Այս սուրբ հոգովն լուսաւորված և կառավարված՝ իրան քաւիչ Քրիստոսի մահուան և չարչարանքների մէջն էնքան շատ մխիթարութիւն և զօրութիւն է գտնում, մինչև որ նորա սիրտն նորանով լցվում։ Այս ասում. թէ որ աստուած իմ կողմն է, էլ ո՞վ կըլինի ինձ հակառակ։ Այս որ իրան որդոյն էլ չըխնայեց՝ այլ մեզ ամէնիս համար մատնեց նորան. էլ ի՞նչպէս նորա հետ ամէն բան չի շնորհիլ մեզ։ (Հռոմ. Ը. 31. 32։) Յիսուսի Քրիստոսի մահն և չարչարանքն հաստատ հաւատացնում են նորան. թէ աստուած հայրն սիրում նորան յաւիտենական սիրով. ինչու որ՝ Քրիստոսովն նորան հաշտացրուց իրան հետ և չի համարում նորան իրան մեղքերը։ (Բ. Կորն. Ե. 19)։ Խաչված Քրիստոսն է նորա յուսոյ հիմունքն, որ աստուծոյ վերայ և նորա յաւիտենական սիրոյ վերայ ունի. ինչու որ՝ աստուծոյն իրան հայր է ճանաչում, որ մեզ համար իրան որդին էնպէսի չարչարանքի մէջ մատնեց. էլ ի՞նչ բան կայ որ նա չի տալ մեզ։

Այս որովհետև էն խաչված Քրիստոսն, որ աստուածա-

նից փրկիչ տրվաւ նորան՝ բնակվումէ նորա սրտի մէջ՝ նա էլ Քրիստոսումն ամէն բարիքներըն է գտնում, և նորանից ոչ թէ միայն ամէն մխիթարութիւն, բայց էլ ամէն զօրութիւն և կարողութիւն է ստանում: որ բարին սիրէ և գործէ։ Հենց էն մտածմունքն և հաստատ և կենդանի հաւատքն, որ խաչված Քրիստոսին և նորա անասելի սիրոյն վերայ ունի՝ յորդորումէ և ստիպումէ նորան, որ ամէն աշխարհական ուրախութիւններըն և մարմնոյ ամէն ցանկութիւններըն, և ամէն երկրաւոր փառքըն և ամէն անցաւոր ապրանքներըն ոչինչ համարէ և նորանցից զզվի։ Այս իրան սրտումն անդադար լսումէ խաչված Յիսուսի Քրիստոսի ձայնըն, որ կանչումէ իրան. թէ դու որ կամենումես իմ ետևէս գալ և ինձ աշակերտ լինել քո անձըդ պիտի ուրանաս և քո խաչըդ վեր առնես և իմ ետևէս գաս. (Մատթ. ժզ. 24։) Պատճառն որ՝ ով որ իրան խաչըն վեր չառնէ և իմ ետևէս գայ, նա արժանի չէ ինձ, և չի կարող իմ աշակերտ լինել։ (Մատթ. ժ. 38։) Սրահամ նորա հոգոյ գլխաւոր հոգն և պարապմունքն և ջանքն էին նորա վերայ է, որ ինքն խաչված Յիսուս Քրիստոսին նմանլինի. և էսպէս նա ամէն կողմանէ ջանք է անում, որ իրա անձըն վարժացնէ բարեպաշտութեանումն և սրբութեան ետևէն գնայ, որ առանց նորան ոչ ով կարող չէ Տէրին տեսնել։ (Նէր. ժբ. 14։ Ա. Պետ. բ. 9—25.) Այս իրան անձըն սրբումէ մարմնոյ և հոգոյ ամէն պղծութեանից, և հետևումէ, սրբութիւն կատարէ աստուծոյ ահովն։ (բ. Կորն. է.) Աղօթքով և աղաչանքով աղօթք է անում ամէն ժամանակ հոգով։ (Նէեմ. ը. 18։) Նա էլ բարի անելըն և հաղորդութիւն անելըն չի մոռանում: ինչուոր գիտումէ՝ թէ աստուծ էնպէսի պատարագներին է հաճոյ կենում։ (Նէր ժգ. 16) Այս ուրախանումէ, երբ որ ինքն արժանի է համարվում Քրիստոսի համար ծաղր, հալածանք, նեղութիւն և դատապարտինք քաշէ, գիտելով՝ որ եթէ մենք նորա հետ նեղութիւն քաշենք. նորա հետ էլ փառաւոր կը լինինք։ Մին խօսքով նա յոյզթումէ ամէնին, նորա ձեռովն, որ սիրեց նորան և նորա համար իրան մատնեց։ Նա ամէն նեղութեան մէջն նոր մտիկ է անում շնորհաց փառքին, որ մեծ է. և էն ամէն

համար պատրաստված կայ երկնքումն, որ կուվի և նեղութեան մէջ հաստատ և հաւատարիմ կըմնայ մինչև վերջն։ Հաւատարիմ կաց մինչև մահ և կենաց պսակըն կըտամ քեզ։ (Յայտն. Բ. 10.)։ Այս խօսքերս նորա ականջներումն միշտ ձայն են տալիս և նրա համար յետևի բարի բաներըն մոռանում, և դէպի առաջ լինողներն հասնելոյ ջանք է անում։ և միտք դնելով վազում դէպի աստուծոյ երկնաւոր կոչումի նպատակն Յիսուս Քրիստոսումն (Փիլ. Գ. 13. 14։)

Աղօթք։

Օ՜հ սէր՝ իմ խաչված սէր՝ Յիսուս Քրիստոս՝ որ ինձ հաշտացրիր աստուծոյ հետ. այսուհետև մէնակ դու պէտք է իմ սրտումս երևիս. քեզ և քո չարչարանքի և մահուան յիշատակին պիտի սրբվի և ընծայ տրվվի իմ սիրտս և իմ բոլոր կեանքս։ Այն սէրն որ նորանով ինձ սիրեցիր, թող միշտ ինձանում կենայ և մնայ և ներս մտնէ իմ ամէն անձիս մէջ։ Տէրութիւն արա՛ իմ զգայարանքներիս վերայ և կառավարիր ինձ ամէն բանի մէջ։ Քո սէրն՝ թող նորոգէ ինձ քո պատկերին պէս, որ իսպառ քեզ նման լինիմ։ որ էլ քո չարչարանքի և մահուան պտուղներն կատարելապէս երևին ինձանում։ Ա՛վ շնորհիր ինձ, որ ամէն բան որ առաջ ինձ համար շահ էր, և որ իմ յոյսս նորա վերայ էի դնում, հիմիկ վնաս և աղբ և ոչինչ համարեմ քո գերազանց գիտութեան համար։ Թող դու միայն ինձ համար ամէնից պատուական լինիս և ամէն ուրիշ բան որ կայ, ոչ ինչ լինի. որ քեզ սատանամ և քեզանում գտնըվիմ. որ իմ յոյսս չըդնեմ իմ արդարութեան վերայ՝ որ օրէնքից է. բայց քո արդարութիւնըդ ունենամ։ որ քեզ հաւատալովն է տրվվում։ որ էլ միայն աստուծոյ առաջին ընդունելի է. որ նորանով քեզ ճանաչեմ՝ և քո յաւիտենական զօրութիւնըն՝ և քո չարչարանքի մասնակց լինելըն, որ քո մահին նման կերպարանվիմ։ (Փիլ. Գ. 8. 9. 10.) մինչև որ վերջն կարօղանամ ասել՝ թէ, ես Քրիստոսի հետ խաչվեցայ. և սրանից ետև կենդանի եմ։ չէ թէ ես բայց խաչված Քրիստոսն կենդանի է ինձանում։ (Գաղ. Բ. 20.) Ա՛վ իմ ամէնից սիրելի փրկիչ. շնորհք տուր, որ անդադար քե-

նայեմ և մտիկ տամ, որ դու ես իմ հաւատքի զօրագլուխն (ը-
նդ-ոնդ) և կատարօղն. որ ամէն ուրախութեան տեղն խաչ ըն-
քեզ վերայ առիր և ամօթի և նախատանքի և հայհոյանքի համ-
բերեցիր։ Թող քո չարչարանքն իմ հոգոյ համար ամէնից
քաղցր միխիթարութիւն լինին. քո խաչն իմ զօրութիւն, մեղ-
քի դէմ կռուելոյ ժամանակումն. և քո մահն իմ յոյսս տրտմու-
թեան ներողութեան և մահուան մէջն։ Ամէն փորձութեան
մէջն իմ միտքս և աչքս դէպի քեզ դարձրու. և տարակու-
սանքի, ներողութեան, և տրտմութեան ժամանակումն թող քո
սէրդ ինձ համար միխիթարութիւն և զօրութիւն, լոյս և
կեանք լինի, որ չը՛վաստակվիմ և չը՛թուլանամ։ բայց համ-
բերութենով կատարեմ էն կռիւն որ ինձ համար կարգ-
ված է։ Ամէն։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ։

Ա. Բարեպաշտ մարդոյ ներսի որդեորութիւնն է նոյն պաշտօն, որ նա
էնդոնի Աստուծոյ պատճառը է և ամենասրբի երրորդութեան
ընակարան։

Երբ որ մեղաւորն թողութիւն է գտել և սուրբ հոգոյ ձեռ-
ամբն լուսաւորված և սրբված է. ապա սրտի մէջն երևումէ
ամենասուրբ երրորդութիւնն. հայրն, որդին և սուրբ հոգին.
ինչու որ՝ Յիսուս Քրիստոսն ասումէ՝ ,,թէ որ մինն ինձ սիրումէ
իմ խօսքս կըպահէ՝ և իմ հայրս կըսիրէ նորան.՝՝ և նորա մօտ
կը գանք և բնակութիւն կանենք նորա մօտ, (Յօհ. ԺԴ.
23.)։ Լասկէսի մեծ պատիւ և փառք է տրվվում էն Քրիս-
տոնեային, որ անտուծոյ հետ հաշտված, և Քրիստոսի արիւ-
նովն սրբված է, և ապա մեծ շնորհակալութենով իրան փրկիչ
Յիսուս Քրիստոսին ամէն բանից աւելի է սիրում. և ո-
րովհետև սիրումէ, էլ նորա պատուիրանքներն պահումէ։
Ահա յաւիտենական Աստուածութիւնն գալիս է մտնումէ
նորա մէջ և բնակվումէ նորանում։ Որդոյն համար նա սիր-
վումէ հօրից. և հայրն տեսութիւն է անում նորան։ Հայրն և
Որդին և Սուրբ հոգին բնակվումեն և մնումեն նորանում։
Սրահամար էլ պօղոս առաքեալն գրումէ՝ թէ ,,Դէք գի-
տում։ որ դուք աստուծոյ տաճար էք՝ և աստուծոյ հո-



Այն բարեպաշտ մարդոյ ձեռքն որպէս սուրբ Երրորդութիւնն, որ նորա սիրտն ի ներքուստ Սէր տաճար է և աւանդ նաւուրբ Երրորդութեան Քրիստոսեան:

գին բնակված է ձեզանում (Ա. Կորն. Գ. 16. 17։) Եվ որ մինն աստուծոյ տաճարըն ապականէ, նորան էլ աստուած կապականէ. ինչու որ՝ աստուծոյ տաճարն սուրբ է, որ էն դուք էք։։ Նոր կորնթացւոյ վերայ գրված երկրորդ թղթումն (Գ. 17) մին էլ գրումէ՝ թէ դուք կենդանի աստուծոյ տաճար էք. ինչպէս որ աստուած ասաց. թէ նորանց միջումն կը բնակվիմ և նորանց միջումն մնան կըգամ և նորանց աստուած կըլինիմ, և նորանք իմ ժողովուրդ։

Սուրբ երրորդութեան հետ Յիսուսի Քրիստոսի խաչըն էլ երևումէ էն սրտի մէջն. պատճառն որ՝ հաւատացեալ Քրիստոնեան իսկի մին ժամանակ չի կարող էն մուռանալ և սրտիցն դուրս հանել։ Խաչված Յիսուսն և նորա չարչարանքն և մահն և նորա արիւնն ամէն օր էն հիմունքն են, որ նորա վերայ Քրիստոնեան հաստատվումէ, որ նորա վերայ էլ իրան հաւատքըն և յոյսըն հաստատումէ, և էլ նորա սիրոյ աղբիւր են։ Երբ որ նա հօրն կամ որդոյն կամ սուրբ հոգոյն մտիկ է տալիս որ իրան մէջ բնակված են, երբ որ մտածումէ թէ՝ էնքան քաղցր սիրով նորանց հետ միաւորված է. երբ որ հոգով սրբախանումէ և շատ երանելի է լինում, ապա միշտ իրան միտքն է բերում էն անցկացած բաներըն, և հարցնումէ իրան. թէ ես մեղաւոր մարդս ինչպէս կարողացայ էս ողորմութեանս հասնել, որ նորան խակի արժանի չեմ։ և ապա պատասխան էն է թէ՝ խաչված Յիսուսի Քրիստոսի ձեռոնին, որ իրան մահոնին հաշտացրուց ինձ աստուծոյ հետ. ինչուորնա է, որ իրան խաչոնին հեռացրուց ինձանից մեղքըն, անէծքըն և մահըն՝ և ողորմութիւն, փրկութիւն և կեանք ինձ համար պատրաստեց և ինձ տուաւ։ Հենց նորա ողորմութենոնին և նորա աշխատանքոնին ես էն ամէնըն ստացայ, որ հիմիկ ունիմ։

Էն եօթն գլխաւոր մեղքերի տեղն՝ որ առաջուց երբ որ առանց Քրիստոսի էր՝ միշտ և ամէն ժամանակ սիրտըն բըռնումէին և նորան սատանայի համար գործելոյ տեղ էին շինում, հիմիկ նրա հակառակն մէնակ բարեպաշտութեան և սրբութեան պտուղներըն էնք տեսնում, որ նորանք են գլխաւոր առաքինութիւններն, այսինքն՝ խոնարհութիւն, սէր, աւատաձեռնութիւն, պարկեշտութիւն, ողորմութիւն

չափաւորութիւն, զգաստութիւն, համբերութիւն, և հեզութիւն, ջերմեռանդութիւն և աղօթքի սէր։

Այս ոչ է նա՝ որ չը կամենայ ամէն զօրութեամբ ջանք անել որ Քրիստոսի խօսքըն և նորա պատուիրանքներըն պահէ, էս է՝ հաւատայ նորան և սիրէ նորան, նորա ետևէն գնայ և նորան նման լինի. պատճառն որ՝ էն հաւատարմութեանն և սիրոյն (Յօհ. ԺԴ. 23։) որ նորա խօսքըն է պահում, էնքան մեծ բան խոստացված է մինչև որ՝ ինքն աստուած էնպէսի մարդոյ սիրտն կամենայ գալ և նորա մէջն բնակութիւն անել։ ,,Եթէ մեզ աստուծոյն սիրենք, կանչում է նորա սիրելին՝ էն սուրբ առաքեալն. ինչու որ՝ նա առաջուց սիրեց մեզ. և սէրն աստուածանից է։ ,,Աստուած սէր է, և ով որ սիրոյ մէջն է կենում՝ նա աստուծոյ մէջն է բնակվում, և աստուած նորանում է բնակվում։ (Ա. Յօհ. Դ. 16։) Քանի զարմանալի բան է, որ հենց էստեղ աշխարհքումն կարող ենք էնքան մօտենալ աստուծոյ մօտ՝ որ նա հենց էստեղ վեր գայ և մեր սրտի մէջ և մեզանում բնակվի։ Այս թող բոլոր սրտով ջանք անենք, որ ամէն կերպով անկեղծ սիրով և ջերմեռանդութեանով էն մեր մեծ և երանելի բարեկամին հետ վարվինք. թող ջանք անենք որ իսպառ նորան յանձնվինք, և միշտ նորա երեսի առաջին լինինք, կենանք և մանդանք և միշտ նորանում մնանք. որովհետև ինքն աստուած էլ կամենում է մեզանում բնակվիլ և մնալ։ Այն բան՝ որ մեր չորա կողմն կայ՝ անցաւոր և ոչինչ է, բոլոր աշխարհքն էլ իրան ամէն փառքին հետ անց է կենում, բայց աստուած և Քրիստոս որ մեզանում է՝ մընում է յաւիտեան և եթէ մօտենանք նորան՝ մին հոգի կըլինինք նորա հետ։ (Ա. Կորն. Զ. 17.)։ Այս ինքն մեծամեծ և պատուական աւետիքներ տուաւ մեզ. որ աստուածային բնութեանն մասնակից պիտի լինինք, եթէ էս աշխարհքիս ցանկութիւններից և ապականութիւններից յետ փախչենք (Բ Պետ. Ա. 4.)։ Թող հաւատանք նորան և նորա ետևէն գնանք ինչպէս թէ կըտեսնենք նորան։ Ով որ հաւատում է նորան, նա էստեղ էլ յաւիտենական կեանքըն և նորա երանութիւնըն ընդունում է իրան մէջ։ (Յօհ. Զ. 47։)

Այն մարդոյ ելք-իսկ որպէս սուրբն է՝ որ ձորա Ջեր-
մեռանդութիւնն ցուցանեմ, և որ մրնչել
սկսումն աշխարհքին սիրել։

Ա.ղ.ՕՐԹ.

Ո՛վ սուրբ և ամէնից քաղցր և սիրելի աստուած՝ և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի հայր և էլ մեր հայր. որքան սիրումես դու մեզ մարդկանցս՝ և որքան ինձ աղքատ, խեղճ և ողորմելի մեղաւորիս էլ սիրեցիր և ուրախ և երանելի արիր քո որդի Յիսուս Քրիստոսովն։ Դու կամենումես ինձանում բնակվիլ, դու ինձանում ես կենում և ես քեզանում։ Օ՜հ որքան շատ մօտացել ես ինձ և ես քեզ. դու խօսք ես տուել որ աստուծոյ ամէն լիութենովն պիտի լցվիմ։ (Եփես. գ. 19.) Այս որքան պարտական եմ, որ քեզ սիրեմ իմ ամէն անձնովս, իմ ամէն սրտովս և իմ ամէն զօրութենովս։ Շնորհիր ինձ էս սէրս, որ իսկապէս սէր լինիմ ես, ինչպէս որ դու սէր ես։ Տուր ինձ որ աւելի քո մօտաւորութիւնն վայելեմ և օրէցօր աւելի քեզ հետ միաւորվիմ։ Մի թողեր՝ որ մին բանով քո սիրուցն ջոկվիմ։ բայց պահիր իմ սիրտս որ քեզ համար յաւիտենական բնակարան լինի։ Այս հոգիս կատարելապէս քեզ մօտ քաշիր և քեզանում հանգստացրու. որ մէնակ քեզ սիրեմ, մէնակ քեզ հետ միաւորված լինիմ և ամէն բան որ քեզանից ջոկ է՝ ոչինչ համարեմ, որ ամէն բանի մէջ մէնակ քեզ տեսնեմ և քեզ գտնեմ. որ ամէն բան քեզ համար անեմ և ամէնին քեզ համար համբերեմ։ որ դու մէնակ ով իմ սրտիս աստուած, իմ բաժին լինիս և մնաս միշտ և յաւիտեան. Ամէն։

ՍԱՆՑԵՐՈՒՄՈՎ ՊԱՏԿԵՐ.

Սա էն մարդոյ նեղուն սրդէուլինէն է դոյց պուլէ՝ որ նորա ջերմեռանդուլինն ցրպանումէ, և որ ինն էլ ոչոումէ աշխարհին ուրբէլ։

Այս պատկերս յայտնի քո առաջիդ կանգնացնումէ էն մարդոյն՝ որ մին աչքով համարձակ և անամօթ իրան չորս կողմնին մտիկ է տալիս, բայց մէկէլ աչքն խփված է մրափումէ։ Նորա սրտի մէջն Յիսուսի Քրիստոսի չարչարանաց նշաններիցն քիչ են մնացել. շնորհաց բոցերն անց են կենում. ասողն՝ այսինքն՝ հաւատքն խաւարվումէ՝ և իրան լոյսն և

չափաղը կորցրել է։ Երբ որ մարդն աստուծոյ և նորա պատուիրանքների սիրումն չի առաջանում։ բայց իրան անձն թուլութեան և թմրութեան է մնանում և աշխարհական ունայնութեան և մարմնաւոր ցանկութիւններին վերայ մտիկ անելով օրեցօր աւելի նորանց ցանկանում է և մտենում, և աղօթք անելոյն և արթուն լինելոյն համար անհոգ է դառնում։ երբ որ նա էս բաներովս խաբված՝ քիչ միտք է անում իրան փրկչի չարչարանաց համար և էլ քիչ է մտիկ տալիս էն իրան հաւատքի խաչված առաջնորդին և կատարողին, և էսպէս կամաց կամաց նորա պատկերը և զօրութիւնը իրան սրտից կորցնում է. ապա ջերմեռանդութիւնն կորչում է և սէրն որ Յիսուսի Քրիստոսի վերայ էր՝ սառչում։ շնորհքն հեռանում է։ հաւատքն շարժվում է և մեռնում է։ սիրտն մութ և խաւար, ցուրտ և տկար է դառնում և ծուլութենով լցվում է։ ապա նորանից ետև էլ ի՞նչ պիտի լինի։ Աշխարհք՝ որ էստեղ առաջի է դրած մարդոյ կերպարանքով։ որ ձեռքումն խանչալ ունի՝ մին էլ սաստիկ ուժով մտենում է և խոցեր է հասցնում նորա սրտին։ Որովհետև նա հիմիկ հաւատքի հաստատութիւն և զորութիւն, լոյս և էլ չէր չունի իրանում։ ապա շատ վախում է աշխարհքի ահ տալուցն. և կամ մոլորվում է նորա խաբեբայ և քաղցր խօսքերովն և ուրախութիւններովն. և մին էլ սկսում է էս աշխարհքով սիրել։

Էն ժամանակն էլ սատանան մին էլ գալիս է և էն հին կենդանիքներին սրտի մէջ մտցնում է և ածում։ և էս շատ հեշտ յաջողվում է նորան. պատճառն որ՝ հիմիկ ոչ ոք չ էլ կայ որ հակառակ կենայ նորան. ինչու որ՝ էն մարդն աղօթքի համար անհոգ և ծոյլ էլաւ և իսկի չի փախչում էն բաներից, որ կարող են նորան մեղքի մէջ քցել, բայց ինքն իրան վտանգի մէջ է քցում։

Ով զարդ որ՝ հրեշտակն կամ Քրիստոսի շնորհքն, ջանք է անում որ սատանային հալածել և դէն քցել. բայց որովհետև մարդ ինքն մեղքի ձեռովն մին էլ սրտի դուռը բանում է նորա համար, և արթուն չի կենում և աղօթք չի անում, ապա մեղքն, և մեղքովն սատանան ինքն էլ մտնում է էն սրտի մէջն։

Ահա էստեղ էն խօսքըն պէտք է յիշենք՝ որ Յիսուս Քրիստոս ասաց. թէ՝ „արթուն կացէք և աղօթք արէք՝ որ փորձութեան մէջ չընկնիք։ Անդադար աղօթք արէք։ Աղօթքն քրիստոնէական կեանքի հոգին է. որտեղ որ աղօթքն տկարանայ կամ բաց թողվի, էնտեղ ամէն բարի բաներն վեր կառնվին։ Աղօթքն հոգևոր շունչ է։ Երբ որ աղօթք չենք անում, արթուն չենք կենում, բայց քնի մէջ ենք ընկնում, ապա թշնամին գալիս է և որոմ (խաղող) ցորենի մէջն ցանում։

Էն սիրտն որ արթուն և պատրաստված չէ. բաց է ամէն թշնամիներին համար. այսինքն մեղքին և սատանային համար։ Սրահամար ոչ հաւատացեալ Քրիստոնեայ՝ իսկի մին ժամանակ թող չըտաս՝ որ հոգևոր արթնութիւնն, և աղօթքն և ներսի ջերմեռանդութիւնն՝ և խաչված Յիսուսի Քրիստոսի վերայ մտիկ տալն՝ թուլանայ. իսկի մին պիղծ բան չըմտնէ աստուծոյ տաճարի մէջ և չապականէ նորան. բայց եթէ ոչ՝ աստուած էլքեզ կապականէ։ „Արթուն էլէք՝ հսկում արէք. ինչու որ ձեր ոսոխ թշնամին՝ սատանան առիւծի պէս գոռում՝ ման է գալիս և պտտում թէ որին կուլ տայ։ Որ հաւաքով հաստատված հակառակ կենաք նորան։ (Ա. Պետ. Ե. 8։) Այս որ կարծում թէ ինքն հաստատ է կանգնած, թող զգոյշ լինի որ վէր չընկնի։ Արժան չէ մեզ. որ իսկի մին ժամանակ մեր հոգևոր զէնքըն (սէլոն) թողենք. էն որ սուրբ պօղոս առաքեալն ցոյց է տալիս մեզ. (Եփես. Զ. 11—19։) ինչու որ՝ մենք մարմնոյ և արիւնի հետ պատերազմ չունինք. բայց իշխանութիւններին և պետութիւններին հետ. էս խաւար աշխարհքիս տիրապետողներին հետ, էն չար դևերին հետ՝ որ երկնքի ներքև են. և մուխ տրվված նեռերոնի հալածումն մեզ. որ մէնակ հաւատքի վահանովն (դուխովն) կարող ենք անցնել նորանց։ Սրահամար հաւատքն միշտ պէտք է հաստատ և կենդանի մնայ և սէրն էլ ջերմեռանդ. բայց էս մէնակ էն ժամանակն կարելի է լինել. երբ որ Յիսուսին և նորա չարչարանքներին մտքից և սրտից իսկի չըհանենք, բայց անդադար նորան մտիկ տանք. երբ որ մեր աչքերըն և սրտերըն յետ դարձնելով աշխարհքից և մեղքի ամէն խա-

քէութիւններից՝ աստուծոյ մօտ կենումենք և անդադար նորա հետ վարվումենք և նորան կատարելապէս հնազանդվելով՝ ականջ ենք դնում շնորհաց ձայնին և սուրբ հոգոյ խրատին։ Դայց հաւատքն կորցնում՝ իրան ամէն լոյսն՝ իրան բոլոր զօրութիւնն և կենդանութիւնն, և սէրն սառչում, երբոր հաւատքի հիմն խաչված Յիսուս Քրիստոսն, որ նորա վերայ խապառ հաստատված է՝ դուրս է գնում էն սրտից։

Աղօթք։

Ո՛վ Տէր, որ սրտերի ծածուկ մտածմունքներըն գիտումես, դու քննումես և ճանաչումես. դու գիտումես իմ տկարութիւնըն և իմ սրտիս անհաստատութիւնըն, որ նա շուտ շուտ սառչում քո սիրուցն և հաւատքով տկարանում։ Դու գիտումես, թէ որքան յօժար եմ ես դէպի մեղքն և դէպի աշխարհքն. և թէ ինչպէս վախում եմ և զզվում ամէն վաստակից և աշխատանքից և ջերմեռանդութենից և արթնութենից՝ որ հարկաւոր է իմ անձիս մեղաւոր բնութիւնըն մեռացնելոյ և իմ սիրտս պահելոյ համար։ Օ՜ օրացրու և կենդանի արա ինձ. հաստատ և ամուր ձեռքով պահիր ինձ։ Դուանց քեզ ես իսկի մին բան չեմ կարող անել. մի թողեր ինձ. քո ձեռքդ ինձանից վեր մի առներ, ով իմ փրկիչ աստուած։ Ես չեմ կարող քեզանում մնալ, թէ որ դու չը՛պահես ինձ և ինձանում չը կենաս։ Մի թողեր, որ լոյն անցնի ինձանում, և սէրն սառչի, յոյսն շարժվի և հաւատքն մեռնի։ Ամէն օր տուր ինձ նոր զօրութիւն և փափակ աղօթք անելոյ համար. շնորհիր ինձ որ սրտի մտօք անդադար քեզ մոտիկ առնեմ։ Տուր որ քո սիրովն վառված՝ իմ աչքերս միշտ և միշտ քեզ վերայ և քո չարչարանքներին վերայ դարձնեմ։ Դա՛մ աչքերս յետ դարձրու որ ունայնութեան մոտիկ չանեն։ Ամէն։

քան մարդոյ սիրուն՝ որ իրան Աստուծոյ թշնամիքն է խոս-
տացեալ՝ զ մարմնոյ չաստուծոյ մեղքն գործել, և
սատանայիքն և մեղքերն թոյլ տուաւ որ իրա-
նում իշխեսցեն մեղք։

ԵՐԵՔԱՆԵՐՄԱՊ ՊԱՏԿԵՐ։

Լոն Տէրէոց ուէրան՝ ու՞ էրան Նուրուգուանէցն էան՝ ուէուէց մէն էլ յօ-
ժուը էուՏօֆ մէղֆ գուրծէլ և ասասայէն և մէղֆէն ըսոյլ ասա՝
ու էրանուՏ էշխանուընէն անէն։

Լոս պատկերս էն մեղաւոր մարդոյ ներսի որպէսութիւնը
է մեր առաջին կանգնայնում, որ Բրիստոս աւետարանի
մէջն (Ղուկ. ժա. 24—27.) էսպէս է պատմում։ Երբ որ
պիղծ դևն դուրս է գալիս մարդուցն, անջուր տեղերանքում
է ման գալիս և հանգիստ խնդրում։ և երբ որ չի գտնում,
ասումէ. յետ դառնամ իմ տունս՝ որտեղից որ դուրս եկի։
Եւ գալիս է, նորան սրբված և պատրաստված է գտնում։
Լոն ժամանակն գնումէ և իրանից էլ աւելի չար եօթը դև
է առնում և մտնումէ բնակվումէ էն տեղ. և էն մարդոյ յե-
տինն աւելի չար է լինում քան թէ առաջինն։

Ով ի՞նչպէսի ահաւոր և զարհուրելի պատկեր և տեսա-
ան է էս. որ սատանան հիմիկ տիրապետումէ, և թագաւո-
ղութիւն է անում հենց էն սրտի մէջն. որ առաջ աստուծոյ
բնակարան էր և սուրբ հոգոյ տաճարն։ Լոն առաջին մեղ-
քերն և դարշելութիւններն, որ պիղծ և կեղտոտ կենդանիք-
ներումն ցոյց են տրվված, մին էլ էն սրտի մէջ տեղ բռնե-
ցին և նորանում բնակվումեն ինչպէս իրանց յատուկ բնակա-
րանի մէջն։ Այս ի՞նչ պատճառով էլաւ էս. հենց նորանով
էլաւ, որ մարդն չըպատուեց էն ողորմութիւնը և շնորհ-
քը, որ աստուածանից ստացաւ. և էն առաջին մեղաց սրբու-
թիւնը մոռացաւ և ջանք չարաւ, որ բարեպաշտութեան և
սրբութեան մէջ հաստատվի. պատճառն որ՝ ով որ ջանք չի
անում առաջանալոյ համար. նա յետանումէ և օրէցօր աւելի
յետ է ընկնում։ Անկարելի է՝ որ հանգիստ կանգնենք և
քնած և անհոգ լինինք, բայց միշտ պէտք է արթուն կենալ և
ջանք անել՝ որ վաղենք և առաջանանք մինչև որ յաւիտենա-
կան երանութեան տեղն հասած լինինք։ Ով որ ջերմեռան-
դութեանով ջանք չի անէ, որ նեղ դռնովն ներս մտնէ՝ և շատ
հաստատ և համարձակ չի գնայ նեղ ճանապարհովն՝ և սրտի
մոքք չի հեռևի, որ օրէցօր մեղքն աւելի ատէ և աշխարհ-

քըն և նորա ցանկութիւններըն անարգէ, և չի փախչի էն ամէն բաներից, որ միշտ էլ կարող են մեղքի մէջ իրան քաշել։ Նա սատանայի ներգործութիւնից, և մեղաց խաբէութիւնից և աշխարհքի ցանկութիւններից միշտ էլ շուտ շուտ նորանց թակարները մէջն կըքցվի։ Այ էն ժամանակն սուրբ պետրոս առաքելոյ խօսքն կատարվումէ, որ ասումէ թէ՝ (Բ. Պետ. Բ. 22։) շունն մինել դառնումէ դէպի իրան փսխածն, և լուացված խոզն ցեխի մէջն թաւալումէ. այսինքն. լուացված և սրբված թեթևամիտ մարդն. միշտ էլ ընկնումէ իրան առաջին մեղքերին մէջ. և միշտ էլ իրան ամէն չար փափակներին և ցանկութիւններին մատնըվումէ։

Այն ժամանակն սուրբ հոգին թողումէ նորան և փախչումէ. պատճառն որ՝ աստուծոյ սուրբ հոգին ի՞նչպէս կարող է պիղծ դևերին հետ միտեղ բնակվիլ։ Ի՞նչպէս կարելի է. որ հենց էն միշտ սիրտն աստուծոյ տաճարը և սատանայի գործելոյ տեղ լինի։

Երեշտակն կամ շնորհքն էլ հեռանումէ՝ ոչ թէ յօ ժար կամքով. բայց շատ տրտմութենով, և իրան ձեռներըն դէպի երկինքն բարձրացնումէ, որ ցոյց տայ՝ թէ Դրխատոս էս ամենից ետև դեռ հիմիկ ողորմութիւն ունի էն ողորմելի մեղաւորին վերայ, և հիմիկ էլ խղճալով կանչումէ. երանի թէ հիմիկ միշտ էլ գիտենայիր էն, որ քո փրկութեան և խաղաղութեան համար պէտք է։ Դո ողորմած աստուծոյ գիրկն և քո երնաւոր հօր սիրտն, որ քեզ ողորմեցաւ, դեռ հիմիկ քեզ համար բաց են։ Այլ հիմիկ յետ դարձիր՝ ո՛վ մեղաւոր և ապստամբված մարդ. միշտ էլ ողորմութիւն կանեմ քեզ վերայ. բայց նա ականջ չի դնում սրան. նա մատնըվել է աշխարհքին և մեղքին և մէնակ նորանց է հետևում. նա իսկի չի ամաչում ոչ յայտնի և ոչ ծածուկ մեղքերից և ամօթից. նա սատանայի ձեռքն իսպառ կուրացած է, և իսկի չի տեսնում էն թակարները և էն կորուստը որ նորանց մէջն է ընկնում։ Նա չի գիտում էն պղծութիւնը և դարշելութիւնը, որ նորա սրտի մէջն բնակված է. պատճառն որ՝ նորա հաւատքն մեռաւ. և աստղն իրան ամէն լոյսը և շափաղները կորցրուց։

Այս հիմիկ մտիկ արա. ո՛վ սիրելի կարդացող համար լսող։ Այ հա

ից քո վիճակդ էլ էապէս է, եթէ դու քո մեղքերըն խոստովանելուց և նորանցից զղջանալուց և թողութիւն ստանալուց ետև՝ աստուծոյ օգնութեամբն մեղքերից չըհեռանաս, այլ նորանց միւս էլ քո անձըդ մատնես։ Սրանից ետև քո տիրդ միջումն յետինն աւելի չար կըլինի քան թէ առաջինը։ պատճառն որ՝ մեղքն և սատանան էլ աւելի հաստատած և զօրացած՝ ուժովի պէս կըկատարին քեզանում, և դու պատ ծառայ և գերի կըլինիս նորանց։ Սրահամար զգոյշ եր և արթուն կաց, որ մինչէլ առաջվան մեղքերին և սովորութիւններին մէջ չըմնկնիս։ Թէ որ մին անգամ շնորհք տանալով դէն քցեցիր սատանայի ամբարտաւանութիւնը, գահութիւնը, պղծութիւնը, նախանձը, շատակերութիւնը, բարկութիւնը, և ծուլութիւնը, որ նորանց հակառակ էնաս և նորանց դէմ կռիւ անես, ապա նորանց համար յաւիտեան անհաշտ թշնամի լեր։ և իսկի մին ժամանակ թող չը՛տաս՝ որ էս մեղքերս քո սրտումդ մին էլ կենդանի լինին։ Հալածիր նորանց։ և փախիր նորանցից որտեղ որ պատահին, ինչ կերպով որ կարելի լինի։ պատճառն որ՝ նորանք միշտ ջանք էն անում, որ մին էլ քեզ մօտ դառնան։ և էն իրանց առաջվան բնակարանը ունենան և իրանց առաջվան իշխանութեան մէջ հաստատուին։ և եթէ մին քիչ տեղ տաս նորանց, էն ժամանակն քո յետին գործքերն աւելի չար կըլինին քան թէ առաջինները։ Հոյսըդ դիր աստուծոյ վերայ՝ որ նա ամենակարող է, և օգնութիւն կանէ քեզ և յաղթութիւն կըտայ քեզ քո թշնամիքներին վերայ։ Թէև վէր ընկնիս, բայց շուտով յոտն կաց և մին էլ կռիւ արա։ Իսկի մին ժամանակ մեղքի հետ խաղաղութիւն չի անես։ Մի՛շտ վազիր և քո ամենակարող փրկչի ձեռքըն բռնիր։ ինչու որ՝ նա կարող է և կամենում որ օգնութիւն անէ քեզ։ Որա աջն կարճ չէ։ նա ամէնից շատ զօրաւոր է։ նա կարող է էն խիստ զօրաւորը և զէնք հագած սատանային կապել և դուրս քցել, նորա թալանը մին էլ նորանից առնել և քեզ ազատել։ Դու ի՞նչպէս կարող ես համբերել՝ որ քո սիրտդ սատանայի և մեղքի բուն լինի։ դեռ քանի որ կարող ես աստուծոյ և սուրբ հոգոյ տաճար լինել։

Ամէն։

Ո՛վ աստուած, էլ հիմիկ իմ աստուած և իմ հայրը ես. ի
չու որ՝ ես քո ստեղծվածն եմ. դու ստեղծեցիր ինձ։ Ի
Բրիստոս՝ ես քեզանով եմ փրկված և դու ես իմ փրկիչ
որ աստուածանից էլար ինձ համար իմաստութիւն, արդա
րութիւն, սրբութիւն և փրկութիւն։ Դու էլ ինձ համա
աստուծոյ աջ կողմն նստուես, և ամէն իշխանութիւն և կ
կօշութիւն ունիս քո ձեռքումդ, որ փրկես ինձ մեղքից, մա
հից և սատանայից, թէև ես ծառայ և գերի լինիմ նորան
Դու ապաստանվածներին համար էլ պարգևներ ընդունեցի
(Սաղմ. կէ. 19.) ապա հենց ինձ համար էլ թէև ես հեռացա
լինիմ քեզանից։ Դու ընդունուես ամէն մեղաւորներից
իսկի մընին չես անարգում և դուրս չես քցում որ քեզ մո
է դառնում, և իրան յոյսը քեզ վերայ է դնում։ Ա՛հա էս
տեղ եմ քո առաջիդ, և մեծ ձայնով կանչումեմ դէպի քեզ
ողորմիր ինձ և շնորհք ցոյց տուր ինձ։ Դու կամենումես
կարող ես ամէնին փրկել. քեզ համար անդունդն էլ խոր չ
դու էնտեղից էլ կարող հանել և ազատել. փրկիր ինձ մեղք
և սատանայի ծառայութենից, որ էլ մեղքն և սատանան իշխա
նութիւն չի՛ անէ ինձանում։ Ամէն։ Ամէն սիրուս մէնակ քեզ պէտք
լինի. ինչուոր դու գնեցիր նորան քո պատուական արիւնովն
նա քոնն է և դու չես կարող նորան ուրիշի ձեռքն թողել
Ապա ուղարկիր քո լոյսդ, որ խաւարն հեռանայ՝ շնորհի
քո հոգիդ՝ որ սատանան փախչի. տուր ինձ քո շնորհքդ, ո
մեղքի ծակօղն փչանայ. և սատանային կոխան շինիր իմ ոտ
ներիս տակն. և նորա իշխանութիւնը քանդիր և ոչինչա
ցրու։ Տէր՝ օգնիր, որ ազատ լինիմ։ Ամէն։

ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ։

Ամենաշնորհաբերոյ Տիրոջ Հոգին և մեղքի վերջին։

Ամէն տեսնումես էստեղ անզեղջ մեղաւորը, թէ ինչպէս
դրած է մահի տեսչակումն. մարմինն ցաւով և հոգին ահով
և դողութենով լցված է. վախումէ մեռնելուցն և ահով բռ
նված է դատաստանին համար՝ որ հիմիկ հասած մոտեցած

Անբարբառն Դարձոյ Դահճն և Դիպչիր
Կարձիքն։

։ Ահա առանց օգնութեան և իսպառ թողված է իսկի մին միսի-
թարութիւն չունի. պատճառն որ՝ չի հաւատում աստուծոյն
իրան փրկչին չի ճանաչում. մահն նորա աչքերի առաջին
անցնած է. և դողացնելով ահ է տալիս նորան որ շուտով
ելզրկէ նորան ամէն բաներից. էս է՝ ամէն ուրախութիւններ-
ից, ամէն ապրանքներից, ամէն փառքից, և էլ էն ամէն բա-
ներից որ վայելումէր։ Սատանան նորա մեղաց գիրքն ցոյց է
տալիս նորան։ Հենց էն սատանան՝ որ առաջ նորա մեղքե-
րի մէջ դարձրուց, և նորանց քաղցր և ախորժելի ձևով և
կերպարանքով ցոյց տուաւ նորան, հիմիկ նորանցով ահ է տա-
լիս նորան. տանջումէ նորա խղճմտանքն և ցոյց է տալիս նո-
րան էն մեղքի վարձքն՝ որ սպասումէ նորան. այսինքն յա-
ւիտենական անէծքն և դատապարտութիւնն և
դժոխքի մէջ անվերջ տանջանքներն։ Յուսահատված
իրան չորս կողմէն աչք է ածում։ և իսկի մին բան չի տես-
նում, բայց մէնակ տանջանք և նեղութիւն որ պատումեն նո-
րան. խղճմտանքն մինչև էս օր քընի մէջ էր, բայց հիմիկ
շարթնացել է և պատառումէ նորա սիրտն հազարաւոր ցա-
ւով. և լցնումէ նորան շատ ահաւոր տանջանքով։ Ահա տես-
նումէ դժոխքին և անդունդին բացված և պատրաստված՝ որ
իրան կուլտան յաւիտեան։ Որովհետև նորա սիրտն առաջուց
շատ պնտացել և քարացել էր մեղքերով ամէն բարի բաներ-
ին համար. սրահամար նա հիմիկ էլ իսկի չի կարող մին միսի-
թարող խօսք լսել կամ հասկանալ. պատճառն որ՝ նա աստու-
ծոյ ձայնին դէմ քարացած է։ Ահա յետ է դառնում էն բա-
րի հոգուցն, աստուծոյ շնորհքիցն՝ էն հրեշտակներից՝ որ իրան
մօտն կանգնած է. և սրահամար սա էլ հեռանումէ և մեղա-
ւորին թողումէ էն յուսահատութեան մէջն, որ յօժար մտքով
ինքն իրան քցեց նորա մէջ։ Դասպէս մեռնումէ՝ և էն Յե-
ռնի դատաստանի աթոռի առաջին երևումէ, որ իրան կենդա-
նութեան ժամանակումն՝ ոչինչ համարեց նորան, նորա խօսքերին ա-
կանջ չընդրաւ կամ նորանցից հեռացաւ. որ նորա ողորմութենովն
ծաղր էր անում, նորա արիւնն ոտի տակ կոխ էր տալիս.
հենց էն Յեռն հիմիկ իրան դատաւոր է տեսնում և նորա բե-
րանից լսումէ էն անփոխելի վճիռն և հրամանն (որ աստ-
ուծոյ) ,,դէն գնա՛, անիծվածդ յաւիտենական կրակի մէջ։

Ահա էս է էն վարձքն և հատուցումն՝ որ մեղքն և աշխարհքն տալիս են մեղաւորին։ Ստուածանից դատապարտված և դէն քցված՝ երկնքի արքայութենից դուրս հանված և աստուծոյ երեսից յաւիտեան հեռացած, նա հիմիկ վէր է ընկնում դժոխքին մէջ՝ անասելի և յաւիտենական տանջանքի մէջ. որտեղ որ կրակն իսկի մին ժամանակ չէ անցնիլ և որդն՝ որ չարչարումէ նորան՝ իսկի մին ժամանակ չէ մեռնիլ։

Ա՛վ քանի՞ հազարաւոր մարդիք վազումեն դէպի էս յաւիտենական կորուստն. և քանի՞ շատ են նորանք. որ քրիստոնեայ են անուանվում, բայց մեղքին, ցանկութիւններին. և գարշելի փափակներին են ծառայում և ագահութեան կամ նախանձու և չարակամութե՛ն, պղծութե՛ն կամ ծուլութե՛ն, բարկութե՛ն կամ շատակերութեան և հարբեցութեան կամ առհասարակ մարմնոյ ցանկութիւններին ժամանվումեն։ Ուշորդ որ մին քանի ժամանակ իրանց մեղքերին համար խոստովանութիւն են անում. բայց ոչթէ սրահամար՝ որ շիտակվին, այլ մէնակ սովորութեան համար։ Խոստովանութենից ետև մին էլ մեղանչումեն. և իրանց չար գործքերի և սովորութիւնների մէջն անփոփոխ են մնում։ Ապա մին էլ խոստովանումեն և մին էլ մեղք են գործում և էսպէս վարվումեն մինչև իրանց կեանքի վերջն։ Իսկի միտք չեն անում, որ իսպառ իրանց մտքի խորհուրդները փոխեն և սրտով իրանց մեղքերից զղջանան, և սրա համար էլ ջերմեռանդութենով և բոլոր սրտով յետ չեն դառնում իրանց փրկիչ Յիսուսի Քրիստոսի մօտն. և նորա շնորհքն չեն մտածում և խնդրում։ Ոմանք շատ անգամ բերանով խոստովանութիւն անեն, հաղորդութիւն առնեն, եկեղեցին գնան, քարոզ լսեն և ուրիշ լաւ բաներ կատարեն. բայց էս ամէն բաների մէջն էնպէս են մնում ինչպէս որ առաջ էին, մեղքի ծառայ, աշխարհքի որդիք, և սատանայի իշխանութեան տակն մատնված՝ և որքան որ եկեղեցական սովորութիւններին հետևումեն, էնքան էլ աւելի պնտանումեն և փակվումեն նորանք՝ կարծելով թէ ամէնն լաւ է իրանց համար. և թէ պէտք չէ իրանց սրտերն փոխել և ճշմարտութենով յետ դառնալ ամէն մեղքերից։ Սահն յանկարծ գալիս է նորանց վերայ, երբ որ իսկի չեն

կարծում. և թալանում նրանց. և որովհետև նորանք մարմնոյ մէջ սերմեցին, սրահամար էլ մարմնոյն կորուստ են հընձում. պատճառն որ՝ ինչ որ մարդն սերմէ, հենց էն կըհնձէ։

Բայց ամէնից ահաւոր և զարհուրելի է նորանց մահն, որ մին անգամ շնորհք գտին, և էն շնորհքն չըպահեցին. Բըրիստոսին ճանաչեցին և նորա մօտ չըմնացին. բայց մին էլ վէր ընկան. և իրանց անձնէրըն մատնեցին աշխարհքին և մեղքին։ Պատճառն որ՝ տուրք պօղոս առաքեալն գրումէ. (Ա՝էր. ժ. 26։ Ը. 3—7։) Ա՝թէ մենք ճշմարտութեան գիտութիւնըն ընդունելուցն ետև՝ յօժար մտքով մեղք գործենք՝ էլ նորանից ետև մին էլ մեղաց համար պատարագ չի մնում։ բայց դատաստանի ահաւոր սպասին, և կրակի նախանձն՝ որ հակառակորդներին կըլափէ։ Պատճառնոր՝ անկարելի է որ նորանք որ մին անգամ մկրտված են՝ որ երկնաւոր պարգևների համըն առին և տուրք հոգոյն մասնակից էլան, և աստուծոյ խօսքի, և նոր գալու աշխարհքի զօրութիւնների համըն առին և (յետոյ) կործանվին, որ (նորանք) մին էլ նորոգվին ապաշխարութիւնդ։ ինչու որ՝ աստուծոյ որդոյն մին էլ իրանց հախաչեցին, և մին էլ խայտառակ արին։

Վ խեղճ մեղաւորք, ձեր ցանկութիւններին մատնվումք անի թէ գիտենայիք, թէ ի՞նչ է էն որ սիրումէք։ Ոսք հըն և կորուստըն էք սիրում։ Ան՝ որ հիմիկ քաղցր է ետում ձեզ. մին ժամանակ կըտանջէ ձեզ։ Ա՝պա միտք առէք ր չար ճանապարհներըն և ատեցէք չարըն։ Յետ քաշվեցէք ցանկութենից և մեղքից. որ ձեզ համար յաւիտենական կորուստ են բերում։ Ա՝կանջ դրէք ձեր բարի հովիւ՝ Յիսուս Բրիստոսի ձայնին. որ ձեզ կանչումէ. „Թէ ինձ մօտ եկէք, իմ արիւնս սրբումէ ձեզ ձեր մեղքերից։ Ես թողութիւն եմ տալիս ձեզ. ես երանելի կանեմ ձեզ. ես իմ ոչխարներին յաւիտենական կեանք եմ տալիս։ Մի պնտացնէք ձեր սրտերըն էս բարի հովիւի ձայնին դէմ. որ չըլնի։ Թէ մին ժամանակ էն դատաւորի սարսափելի ձայնըն լսէք որ ասումէ՝ գնացէք ինձանից անիծվածներ յաւիտենական

կրանն։ Սատանայ վախենալոյ քան է կենդանի սատուծոյ ձեռքին մէջ ընկնիլն։ (Եբր. ժ. 31։)

Ը.ՂՕՐԹ։

Ո՛վ Տէր, դու արդար ես և արդար են քո ամէն դատաստաններն։ Քո առաջիդ երեսպաշտութիւն չը՛կայ։ Դու ամէն մէկին իրան գործքերին պէս հատուցումը կըտաս։ Ո՛վ որ չի ապաշխարում, և քո խօսքին չի հաւատում. և նորան չի պահում, նա հենց հիմիկ դատապարտուած է. և կեանքըն չըտեսնիլ. բայց յաւիտեան կըմնայ մահի մէջ։ Ուրքան որ դու քաղցր ես բարեպաշտներին և հաւատացեալներին համար, էնքան էլ ահաւոր ես դու էն մեղաւորին համար, որ չի զղջանում և քեզ մօտ չի դառնում։ Ո՛վ Տէր և փրկիչ. դու փրկեցիր ինձ մեղքից, մահից և դժոխքից. զօրացրու և հաստատիր ինձ. որ հենց էս ժամանակումն իմ սիրտըս մեղքից յետ քաշեմ և քեզ մօտ դարձնեմ։ Ընթռուն արա՛ ինձ՝ որ մահն ինձ չըթալանէ. բայց որ կեանքըն ունենամ։ Կոտրիր իմ սիրտըս. որ ձշմարտապէս ապաշխարեմ, քո հոգոյն հնազանդվիմ և նորա ձեռոքն քեզ համար միայն նոր մարդ լինիմ և ապա մէնակ քեզ համար ապրիմ և քեզ համար միշտ հեռ։ Ամէն։

ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ։

Լոն դրէսդենէայ Տարբոյ նէրսէ սրպէսու-ԼԷ-ՆՆ, որ ՌԷՂԷՆ ՊԷՏ ՀՈՒԷ-ԱՆԷԼով և ԷԱՐԷՊԱՇՏՈՒԼԷՆ ՄԷՋ վարվելով հաստատ և հաստատէտ է ՄԻՆՉԻ ԷՐԵՆ ՀԷՆԵՎԷ ՎԷՐՋԻՆ։

Լոս պատկերիս մէջն տեսնումես դու, թէ քրիստոնեայ մարդոյ սիրտն ինչպէս ամէն կողմից պինտ պատած և փակված է թշնամիքներով։ Սատանան և մեղքն անդադար մտիկ էն տալիս մեզ վերայ, և ջանք էն անում որ հասնեն էն առաջին իշխանութեանն, որ էն սրտի մէջ ունէին։ Ցած կուշտն երկու մարդ կա՝. որ էս աշխարհքըս էն նշանակում, որ նորանցից մինն մին թաս բռնած առաջ է բերում. և համեցէք է անում մարդոյն, որ գայ վայելէ աշխարհքի ցանկութիւններն և ուռոխութիւնները, փառքն և մեծութիւնն. բայց

հոգ փրկութեանէ Քրիստոս որպէս թագաւորեաց, որ մեղքիս
դիմաց հոգեւոր աշխարհի և թագաւորութեան Տէր
Աստուծոյ հաստատուն և հաւատարիմ է մեռեալ
Տիրէն և իրաւն հիմն աշխարհի Տէրն:

Մէկէլն որ մին խանչալ իրան ձեռքումն բռնած ունի, ջանք է անում, որ ահու վախ տալով, հալածանքով, նախատինքներով և ուրիշ զօրաւոր հնարքներով Քրիստոնեային վախցնէ և յետ դարձնէ Ճշմարտութեան Ճանապարհից, և ապա մին էլ մեղաց Ճանապարհն տանի։

Փրկութեան թշնամիքներին հետ. այսինքն. մարմնոյ հետ՝ աշխարհքի և սատանայի հետ. Քրիստոնեայ մարդն իրան բոլոր կեանքի մէջն միշտ և անդադար պէտք է կռիւ անէ, բայց նորա սիրտն էլ պատրաստված և զինուորված և կռվի սիլահ հագած է նորանց դէմ։ և սրահամար էլ չեն կարող յաղթել նորան։

Երեշտակն՝ այսինքն՝ աստուծոյ շնորհքն որ վերևումն կանգնած է, միշտ յորդորումէ նորան, որ կռվի մէջն հաստատ լինի և համբերութեանով գիմանայ և յաղթէ. միշտ կանչումէ և ասում նորան. թէ ո՛չ ով պակ չի սատանալ թէ որ կարգի պէս չըկռվի. և ով որ մինչև վերջն կըհամբերէ՝ նա կապրի։

Նորա սրտի միջումն աստղն շատ պայծառ և գեղեցիկ կերպով լոյս է տալիս. էն հաւատքն կենդանի է նորանում, և հաւատքն է էն յաղթութիւնն՝ որ յաղթումէ աշխարհքին, (Ա. Յօհ. Ե. 4։) Նա լցված է յուսով դէպի աստուած, և սրահամար սրտի մին կողմն գրված է թէ. ո՛վ է աստուծոյ նման. Աստուած ինձ հետ է և ես նորա հետև նորանով ամէն բան կարելի է ինձ համար. նորա ողորմութիւնն և շնորհքն բաւական է ինձ։ Բայց մէկէլ կողմն գըրված է, թէ հիմիկ ո՞վ կըբաժանէ ինձ Քրիստոսի սէրուց. „Նեղութիւնն թէ չարչարանք թէ հալածմունք, թէ սով, թէ մերկութիւն թէ վիշտ՝ թէ սուր. բայց էս ամէն բաներումս էլ աւելի յաղթումենք նորա ձեռովն որ մեզ սիրեց։ (Հռովմ. Ը. 35. 37.) Ուրեմն հաւատքն և սէրն նորա սրտի միջումն առաջին տեղն ունին և հաստատումեն նորան բարեպաշտութեան մէջն։

Էն սրտի միջումն երևումէ մին սուրբ նշխարք որ նորա չարս կողմովն գրած է՝ թէ Յ՛սուս է իմ սէրս։ Էս նշանակումէ՝ թէ նա շատ սուված և ծարաւ է հոգոյ Ճշմարիտ երկրպագութիւնին և կեանքի էն հացին։ „որ երկնքիցն է վէր գա-

լիս և աշխարհքին կեանք է տալիս։ (Յոհ. Ղ. 33.) Հենց
էս կենդանի և կենդանացնող հացն է կերակրում՝ և հաս-
տատում նա իրան հաւատքն և սէրն շատ անգամ սուրբ
խորհրդի հաղորդութիւնն առնելով. էս կերակուրի մէջ
նա ամէնից շատ մեծ զօրութիւն, և յաւիտենական կեանքն
էլ է գտնում։ ինչպէս որ հենց Յիսուս ինքն էլ խոստացաւ
թէ ով որ իմ մարմինս ուտում է. և իմ արիւնս խմում, յա-
ւիտենական կեանքն ունի. նա ինձանում կըբնակվի և ես
նորանում (Յոհ. Ղ. 54. 56։)

Այ էլ տեսնումես էն սրտումն խաչված Յիսուս Քրի-
ստոսին և մին բացված գիրք. այսինքն. սուրբ աւե-
տարանն կամ սուրբ աստուածաշունչ գրքերն։
Պատճառն որ՝ աստուծոյ սուրբ խօսքն կարդալն և միտք ա-
նելն. և մանաւանդ Յիսուսի Քրիստոսի չարչարանքին և
մահին համար մտածելն ամէն օր նորա համար շատ սիրելի
գործ է և նորա հոգոյ համար քաղցրահամ կերակուր՝ որնո-
րանով իրան անձն հաստատում է և զօրացնում մէղքի աշ-
խարհքի, մարմնոյ, և սատանայի դէմ։ ամէն փորձութիւննե-
րումն։ Ով որ խաչված Յիսուս Քրիստոսին իրան սրտումն
ունենայ, և չը՛պահէ, յատուկ որ նա կենդանի մարմնով մե-
ռած է. և ով որ աստուծոյ խօսքն, սուրբ գիրքերն և աւե-
տարանն ուրիշ ամէն գրքերից աւելի չըսիրէ, ամէնից
աւելի չըկարդայ և մտածէ, ամէն ուրիշ գիտութենից աւե-
լի չըպատուէ՝ և իրան վարքի և կեանքի համար կանոն և օ-
րինակ չըկարգէ և համարէ. նա հոգով խիստ հիւանդ է, և
պէտք է վախենայ՝ որ խապար դէն քցվի և մեռնի։

Վերջապէս էն սրտի մէջն տեսնումենք եկեղեցի բացված,
քսակ փողով լցված, հաց և ձուկն։

Եկեղեցին նշանակումէ, թէ նա շատ ցանկութենով և
անդադար պարապվումէ աղօթքին. թէ բարեպաշտ մարդկանց
հասարակ ժողովքի մէջ և թէ առանձին տեղ. իրան օթա-
ղի մէջն. որ մին խօսքով ասեմ։ ամէն տեղ որ նա գտնըվի
գնայ և կանգնի, նորա սիրտն աստուծոյ հետ խօսումէ. և էլ
ամէն տեղ առանց խօսելոյ մտածումէ նորա համար. ուրա-
խանումէ նորա երեսի լուսովն, յանձնըվումէ նորան և կենդու-
մենումէ նորանում։ Առանց աղօթքի ոչ ով կարող չէ բարե-

պաշտուելեան, հաւատքի, և սիրոյ մէջ հաստատ մը-
նալ։

Դացվաձ քսակն՝ նշանակումէ նորա ողորմածութիւնը և
սէրը, որ ընկերի վերայ ունի։ Այս ազահութեան դէմ հա-
կառակ կենալով՝ յօժար կամքով կարողութեան պէս իրան
ապրանքէն ողորմութիւն և օգնութիւն և բաժին է տալ խա
կարօտ և աղքատ եղբարներին՝ որ սէր ցոյց տայ, և իրան
սիրտը էլ աւելի հեռայնէ էս երկրաւոր և աշխարհական
բաներէն։ Պատճառն որ՝ նա գիտումէ՝ թէ հոգիք շատկան
որ իրանց առաջին չար ցանկութիւններին. ինչպէս որ պըղ-
ծութիւնը և կամ շատակերութիւնը ուրանալով և հեռա-
ցնելով սատանայի թակներէն ազատվեցան, բայց մին էլ
կամաց կամաց նորա իշխանութեան տակն, վեր ընկան
նրահամար որ իրանց անձնէրը ծածուկ ազահութեան և
արծաթասիրութեան մատնեցին. և շատ կերպ պատճառանք-
ներով մուրացան ողորմութիւն և օգնութիւն առել նորանց,
որ կարօտ և աղքատ են։

Դացն և ձուկն նշանակումեն նորա պարկեշտութիւնը
չափաւորութիւնը և զգաստութիւնը. ինչու որ՝ նա ար-
թուն է կենում, որ ամէն բանի մէջ չափը ուղիղ պահէ.
որ չըլինի թէ կերակուրներով և խմելիքներով մարմնոյ ցան-
կութիւնները մեծայնէ. և հոգին տկարացնէ, և ապա բա-
ռեպաշտութեան Ճանապարհէն հեռանայ։

Ենց էս զէնքերովս («ելեհնէրովս») Ճշմարիտ Քրիստոնեան
կռիւ է անում։ էս զէնքերըս նա իսկի մին ժամանակ իրանից
չի հանում, և սրահամար յաղթութիւն է ստանում իրան
թշնամիներին վերայ, աշխարհքի մարմնոյ և սատանայի վե-
րայ։

Աղօթք։

Ո՛վ Յիսուս Քրիստոս, ում իմ սէր. եթէ քեզ ուզենամ
իսկի մին բանի կարօտ չեմ լինել. բնակվիր ինձանում և շնորհք
տուր ինձ, որ ես էլ բնակվիմ և մնամ քեզանում. և ապա
վազ կըլինիմ, բայց առանց քեզ իսկի մին բան կարող չեմ ա-
նել։ Դ՛մ հաւատքս էլ աւելի կենդանի շինիր. որ քեզ ա-
մէնակարողիդ բռնեմ։ և քեզանով որ ամէն բան կարող ես ա

նել, ամէն բանի յաղթեմ։ Թո՛ղ քո սէրդ շատանայ ինձանում և իմ սիրտը խապառ վառէ. որ մէնակ քեզ՝ և քո գերագանց գեղեցկութիւնը, և յաւիտենական փառաւորութիւնը ամէն բանից աւելի սիրեմ. և քեզանից ջոկ իսկի մին բան գեղեցիկ և ախորժ և իմ սիրոյս արժանի չըհամարեմ։ Տո՛ւր ինձ հաստատութեան շնորհքը՝ որ մէնակ քեզանից է վեր գալիս։ Ինձ թո՛ղ մի տար, որ մին բանով ջոկվիմ քո սիրուցն։ Որ խաչն, քո մահն և քո մահի յիշատակն թո՛ղ օրէցօր իմ սէրը քեզ վերայ աւելացնէ և իմ հոգիս էլ աւելի քեզ հետ միաւորէ. որ յաւիտեան չըջոկվիմ։ Շնորհի՛ր ինձ սրանով, որ հենց էստեղ յաւիտենական կեանքը վայելեմ ինչպէս որ դուխոստացար՝ և հաւատքի ձեռովն բնակվի՛ր իմ սրտիս մէջն։ (Եփես. Գ.)։ Որ խօսքն, որ լցված է հոգով և կենդանութեանով, թո՛ղ ամէն օր զարթնացնէ, լուսաւորէ, միխիթարէ, յորդորէ, կենդանացնէ, զօրացնէ և հաստատէ ինձ, որ օրէցօր կռիւ անեմ մեղքի հետ համբերութեանով և հաւատարմութեանով։ Թո՛ղ իմ բոլոր սիրտս և իմ ամէն խորհուրդները և փափագները իսպառ քեզ ընծայվին և սրբվին. և կարողութիւն և գիտութիւն տո՛ւր ինձ որ ո՛չ թէ մէնակ մին քանի [illegible] ցանկութիւններին հակառակ կռիւ անեմ, ~~բայց հլ~~ առ հաստատակ ամէնին հետ. ինչպէս որ ագահութեանն էնպէս էլ պըղծութեանն, նախանձուն, չարակամութեանն, ամբարտաւանութեանն, բարկութեանն և վրէժխնդրութեանն, ծուլութեանն և անառակութեանն յաղթեմ։ Շնորհի՛ր ինձ քո հոգին որ անդադար աղօթք անեմ, որ քեզանից միշտ նոր զօրութիւն ստանամ յաղթութեան և քեզ հաւատարիմ մնալոյ համար մինչև իմ կեանքիս վերջն։ Ամէն։

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ։

Որբեպաշտ և սրբոց հարգոյ հանդէս

Արարչն որ մինչև իրան կեանքի վերջն հաւատքի և բարեպաշտութեան մէջն հաստատ է մնում. վերջապէս ուրախութեանով և միխիթարութեանով վեր է ընկնում իրան մեռնելոյ տեղը բարձի վերայ՝ երբ որ իրան վերջին սահմանն հասնում է։ Նա չի վախում, ո՛չ մահից և ո՛չ դատաստանից. պատճառն



Բարբարոսն և արդար Դարձ-ոյ
ՆահՃ :

ր՝ նորանք չեն կարող ինաս տալ նորան. ինչպէս որ Յիսուս Քրիստոս ինքն հաստատումէ և ասում. ,,թէ ձշմարիտը ասումեմ ձեզ. թէ նա որ իմ խօսքիս ականջ է դնում, և հաւատումէ նորան որ ինձ ուղարկեց, յաւիտեան կեանքը կընդունի, և դատաստան չի մտնիլ, այլ մահից փոխվեցաւ դէպի կեանքն։ (Յովհան. ե. 44,)

Ա.հա էսպէս արդար մարդն հանգիստ խղճմտանքով վէր կացած է. պատճառն որ՝ նորա մեղքերն թողված են, և իրան սրտի մէջն աստուծոյ քաղցր ողորմութիւնը և շնորհքն ունի և վայելումէ. խաչը սրտովն առած՝ նա ցոյց է տալիս իրան սէրը և ջերմեռանդութիւնը որ խաչված Յիսուս Քրիստոսին վերայ ունի. ինչու որ՝ միշտ և մէնակ իրան յոյսը նորա վերայ է դրել. և նա հիմիկ հեռց մահի մէջն նորա յաստուկ յոյսն և ուրախութիւնն է։ Ինչպէս որ Քրիստոսի համար ապրեց, հեռց էսպէս էլ նորա համար մեռնումէ։ Նորա ուրախ երեսումն փայլումէ էն նեռսի խաղաղութիւնն, էն աստուածային մխիթարութիւնն և սուրբ հոգոյ էն հաստատութիւնն, որ բնակվումէ նորա սրտի մէջն։ Ա.ջքն և իրան դէպի երկինքս դարձած էն, և նորա բոլոր երեսն ցոյց տալիս էն որ նորա հոգին միտք է անում. այսինքն թէ ես ցանկանումեմ որ մարմնուցն դուրս գամ և Քրիստոսի հետ լինիմ։ Ա.ստուծոյ հրեշտակն սպասումէ, մինչև որ նորա հոգին՝ մարմնուցն ազատվի, որ նորան տանի աստուծոյ ծոյն։ Ա.յ երբ որ հոգին ջոկվումէ էն հողի մարմնուցն և նորա կապանքից, ապա ուրախութեանով վերանումէ նորա մօտ, որ էստեղ հաւատաց նորան. որ իրան յոյսը նորա վերայ դրաւ և նորան սիրեց առանց տեսնելոյ։ Ա.հա հիմիկ եկել է ուրախանալի ժամանակն որ նորա երեսի առաջին կանգնի։ Քրիստոս նորա առաջն է գալիս և իրան ձեռքն դէպի նա մեկնելով՝ ասումէ՝ ԷԿ ո՛վ ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև քիչ բանումդ հաւատարիմ ես, քեզ շատ բաների վերայ կըդնեմ. մտի՛ր քո Տէրի ուրախութիւնն։

Սատանան ամօթ քաշելով փախչումէ։ Օ՜հ ինչպէսի ուրախութիւն և ի՞նչպէսի ցնծութիւն կըլինի, երբ որ հա-

սատանան Յիսուս Քրիստոսին կըտեսնէ, ինչպէս դա է, և նորան նման կըլինի փառքով և երանութեամբ։ Ով կարող է էս ասել և պատմել։ Ահա էսպէս երանելի է էն արդար մարդոյ մահն, որ Քրիստոսին հաւատաց և մեղքին, աշխարհքին և սատանային հակառակ անշարժ և հաստատ մնաց մինչև վերջն։ Դապէս լաւ են վերջանում բարեպաշտ մարդոյ կոռիւներն և չարչարանքներն։ Դրանի թէ սրանով ամէն մարդ յորդորվի և սիրտ առնէ, որ հաստատ մնայ հաւատքումն, և ամէն օր կռվի, և ամէն ջերմեռանդութեամբ ջանք անէ, նեղ դռնումն մտնելոյ. և յաջողութեամբ իրան դնալն վերջացնելոյ համար։ Պատճառն որ՝ արքայութեանմէջն կենում և մնում նորա համար փառաւոր պակ և յաւիտենական, անարատ և փառաւոր ժառանգութիւն։

Աղօթք։

Ով Տէր Յիսուս Քրիստոս, երբ որ ես մահու տեղու բարձի մէջ դրած կըլինիմ. քանի՞ լաւ կըլինի ինձ համար, եթէ քեզ իմ սրտումս ունենամ։ և եթէ դու ինձ հետ լինիս և ինձ մխիթարես։ Դն ժամանակն ով կարող կըլինի ինձ վախացնել և մեղադրել։ Դմ մեղքե՞ր չկ՝ պատճառն որ դու ինձ քաշխեցիր նորանց. դու ինձ արդարացրիր, լուացիր և սրբեցիր ինձ քո անգին արիւնովն։ Մի թէ սատանան կարող կըլինի նեղացնել և վախցնել ինձ. քաւ լիցի. իսկի կարող չէ. ինչու որ՝ դու յաղթեցիր նորան. զօրութիւնդ էր աւիր նորանից. դա ինձ դէմ կարող չէ մին բան անել պատճառն որ դու իմ կողմն ես։ Դրաւի որ դու հենց ինձ համար մեռար և յարութիւն առիր և հենց ինձ համար նստուցիր աստուծոյ աջ կողմն և բարեխօս ես լինում ինձ համար (Հռոմ. Ը.) Դպա ուրեմն իսկի մին բան չըկայ որ մահուան սահմանումն կարենայ ջոկել ինձ քո սիրուցն։ Սրահամար ով սիրելի Յիսուս, տուր ինձ, որ մէնակ քեզ համար ապրիմ և քեզ համար մեռնիմ։ որ Հ. պատճշմարիտ և հաւատարիմ լինիմ քո առաջիդ սիրով. և իսկի մին ժամանակ քեզանից չըհեռանամ։ Աղօրմութիւն շնորհիր ինձ՝ որ ամէն օր մեռնեմ էն ամէնին, որ քեզանից չէ, և իմ սիրտս հեռացնեմ և ազատ պահեմ էն ամէնից, որ չի կարող

ինձ հետ գալ մահի ժամանակումն։ Սիրոյ ջերմեռանդութիւնը աւելացրու ինձանում, որ քո երկնաւոր և յաւիտենական արքայութեանն ցանկանամ, որ հեռց հիմիկ իմ քաղաքավարութիւնը ունենամ երկնքումն, որտեղ որ իմ անուշա գրված է։ Լսում էն քո երանութիւնը՝ ասանալոյ և քեզ հետ լինելոյ ծեմ առանց թուլանալոյ և նեղանալոյ. որ էլ մին ժամանակ էնտեղ առանց դադարելոյ պտուղ հնձեմ։ Ո՛վ սիրելի փըրկիչ՝ սորա հետ էլ հեռց էն շնորհիը, որ միշտ և անդադար քո ողորմութեանդ և սիրոյդ վերայ իմ բոլոր յոյսը դնեմ, և քո չարչարանքը և վահը և անգին աշխատանքները իմ փրկութեան հիմը ունենամ։ պատճառն որ՝ դու ինձ համար մեռար և ինձ համար կենդանի ես հիմիկ և յաւիտեան յաւիտենից։ Ամէն։

ուշի քերդումն աւետարանական ժողովքի տան մէջն էս հետեւոյ գրեանքս էլ ծախվումեն։

---

1. Լոր հայհոյող պոլսոյ 'ի վերնոցն։
2. Յոտնաւորաց-ին։ փրկիչն։
3. Յոտնաւոր էանգիրտ. 'ի գրէաց յաշխարհէաց։
4. Ընտիր ցոյց 'ի հինգ հայհոյողն։
5. Յանապատն մարգարէին վերնոցէ. գրէաց և աշխարհէաց։
6. Պարտնաւորին սուրբ գրոց գրոյ գրէաց։
7. Տէրունական յէանգեանց։
8. Ընտիր հինգ հատուած։
9. Ընտիր խօսողացէ հին փոհանոցի հին աշխարհահայ տարբերց հէպն. աշխարհէաց։
10. Ընտրեալ ալօթքէ հատ հին արբէ ծառայի պարտնաւէ. աշխարհահէաց։
11. Յոտնաւոր փնտրողին փրկութեանէ հաւատոց և տահմէ պահանց էրանէ. աշխարհէաց։
12. Շ սոր հարկաւոր հարցնտուն փնտրէ. աշխարհէաց։
13. Յոտանաւէ վերջին. աշխարհէաց։
14. Պարձաւոր աղօթքնէր շէրիր մէջ մէջ օրին հատուր. աշխարհէաց։
15. Ընդէ հեծանելոյն և պօրանելոյն հատուր. աշխարհէաց։
16. Ընդշ խաղ անէլոյ էան չէ. աշխարհէաց։
17. Յարարտնաւոր սա-սր աօղ տարբէանոց հատուր. աշխարհէաց։
18. Ընտրեանէ ճշնարտաւէ և պօրանէաց հատուր. աշխարհէաց։
19. Պարտաւորէանէ փրէսպուտ խէչին հատուր. աշխարհէաց։
20, Տան և վերց հարճաւոր փարուշէր. աշխարհէաց։
21. Պարարտ սաւգ սրբէալ օրին հատուր, որ ներկէր Յէ Պէ էարէանոց և տահանան վերոյ. աշխարհէաց։
22. Ամանաբերհոյոյ սա էարէաղար հէանս, որ հերհէալ է 'ի հանան Պրբեանէանէ. գրէաց։
23. Պէրշ է էրաղէտոյնոց ճաս վան պանհրատանէան հաւոյց։ գրէաց։

[illegible]

[illegible]

[illegible]